


ՀՅԴ Պատգամաբեր




ԴՐՈՇԱԿ



Մայիս N05 (1632)

2011





«Դրօշակ»

ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ ՀՅԴ

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

խմբագիր՝ Կ. Խանլարյան

Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի

Ձեռավորումը՝ Ա. Գրիգորյանի

Ոճը՝ Ս. Փարթամյանի

Գրանցման վկայական 897

Երևան, 375010, Միեր Մկրտչյան 12/1
Հեռ. 521 876
Էլ. փոստ. droshak@arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

“Droshak” monthly,
ARF dashnaksoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian, Yerevan, 375010
Tel. 521 876
e.mail: droshak@arf.am

Խմբագրական

Անկախութեան գաղափարի ներազգային հետազոծը 2

Սոցիալ-սնտեսական

Հողային բարեփոխումների 20-ամյա դասերը 4

Առաջարկ

Լեռնամենսալուրգիական համալիրի զարգացման
հիմնախնդիրները 11

Տարածաբան

Ադրբեջանական ռազմարդյունաբերության
ձեռքբերումները 18

Տեղեկանք

Իսրայելական գործոնն Աբխազիայում 25

Պատմագիտական

Հայաստանի Առաջին Հանրապետության
ղեկավարության հաստատումը Սփյուռքում 30

Գիտաժողով

Գիտաժողով՝ նվիրված Հ. Օսականին 37

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Գնունեան 40

Նոր գրքեր

Երիթուրի 1919-1921 թթ. դասավարությունների
վավերագրերը ըստ օսմանյան մամուլի 46

Պատկերասրահ

Վլադիմիր Աբրոյան 48

Անկախութեան գաղափարի ներազգային հետազոծը

Հայ ժողովրդի արդի պայմանների մէջ անկախութեան գաղափարը որդեգրուել, մշակուել եւ կենսագործուել է, հիմնականում, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնների շնորհիւ:

Անկախութեան համար մղուող ազատագրական պայքարի ողջ ընթացքում, խոշոր բուրժուազիայի հայ ներկայացուցիչները, ռուս-աւստրական եւ թուրք-աղայական կաստրաներին պարկանող հայ ազնուականները, անկախութեան գաղափարը նուստրացնելուց, թերարժեւորելուց, ծաղրելուց ու ակտիւորէն ժխտելուց բացի, ուրիշ բան անել չէին կամենում:

Քրիստոսոստոս Միքայէլեաններն ու Արամ Մանուկեանները, Մուրադ Պոյաճեաններն ու Փարամազները, Ակնունիներն ու Արմենակ Եկարեանները, Քեռիներն ու Համազասպաններն էին սեփական կեանքի գնով, սեփական օրինակով մշակում, փարածում եւ կենսագործում անկախութեան գաղափարը՝ կերպելով Մայիսի 28:

Այս երեսոյթը ամենեւին էլ պարահական չէ:

Անկախութեան գաղափարը կրում եւ իրականացնում են գաղափարական այն հոսանքները, որոնք, անկախ փեսաբանական փարակարծութիւններից, այսպէս թէ այնպէս, հաւատում են արդարութեան եւ ազատութեան սկզբունքներին:

Խորհրդային Միութեան փարիներին, քաղաքական պայմաններով, ՄԴՀԿ-ն ու ՌԱԿ-ը, թէեւ անկախութեան պահանջը հանեցին իրենց քաղաքական օրակարգից, սակայն գաղափարախօսական հողի վրայ չհրաժարուեցին անկախութեան գաղափարից: Իսկ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, Հայ Դարի պահանջարկիւթեան համարեքսում, մշտարժարժ պահեց Անկախ Հայաստանի գաղափարը:

Միւս ազգերի անկախութեան պայմանութեան մէջ եւս ուրուագծելի են նման օրինակափութիւններ: Յունաստանի, Բուլղարիայի, Իռլանդիայի, Լիբանանի, Սիրիայի եւ բազում այլոց անկախութեան գործը, փաստօրէն, կազմակերպել եւ ղեկավարել են րուեալ ազգերի սոցիալիստական, սոցիալ-դեմոկրատական, լիբերալական հոսանքները (անշուշտ հարկաւոր է փարբերակել դասական լիբերալիզմը նէոլիբերալիզմից, որը համար-

ում է մերօրեայ նոր աշխարհակարգի եւ համաշխարհայնացման գլխաւոր գաղափարախօսութիւնը):

Տիեզերական օրէնքը գործել է շարունակում է գործել ամենուր, քանզի ազգային անկախութիւն, սոցիալական արդարութիւն եւ քաղաքական ազատութիւն հասկացութիւնները, խորքային առումով, միմեանց փոխկապակցուած, միմեանցով փոխապայմանաւորուած եւ միմեանց վրայ փոխազդեցութիւն ունեցող գաղափարական արժէքներ են:

Իսկ այսօր ինչպիսի՞ դիրք է տեղ ունի անկախութեան գաղափարը Հայաստանում ու հայութեան մէջ: Կամ՝ ի՞նչ առնչութիւնների մէջ են անկախութիւն, ազատութիւն եւ արդարութիւն հասկացութիւնները:

Հայաստանում թէեւ ընդունուած են հիմնարար ազատութիւնների մասին սահմանադրական դրոյթներ եւ համապատասխան մեխանիզմներ, թէեւ քաղաքական դաշտը, աւելի ճիշտ՝ քաղաքական բեմահարթակը, մի կերպ ընթանում է «բնականոն» հունով, թէեւ զուր փիճակագրական տուեալներով «անում» է զանգուածային լրատուամիջոցների եւ քաղաքացիական հասարակութիւնների թիւը, սակայն Հայաստանը շարունակում է մնալ անազար, իսկ հայն իր հայրենիքում բաւական հեռու է ազար քաղաքացի լինելու կարգավիճակից: Այս անազարութեան հիմնական պարճառներից մէկը սոցիալական անարդար իրավիճակն է, որը յարկանշում է օլիգարխիկ կառավարման, մոնոպոլիզացիայի, հարկային դաշտի եւ գնազոյացման համակարգի անարդիւնաւէտութեան եւ այլ յոռի երեւոյթներով: Հայաստանում կարելի է զգայարանների ողջ համակարգով առարկայօրէն տեսնել ու շօշափել, թէ սոցիալապէս անապահով հասարակութիւնը ինչպիսի անազար կեանք է վարում եւ ինչպիսի քաղաքական աննպաստ ճակատագիր է բաժին հասել նրան: Ազատութիւն հասկացութեան փոխարէն, շուրջբոլորը աչքի է զարնում «ազար շուկայի» այլանդակուած ծաղրանկարը միայն:

Անազարութեան հիմնական պարճառնե-

րից է նաեւ հոգեմտաւոր կեանքի նուազ զարգացումը: Մշակութային եւ, յարկապէս, գիտական նուաճումները արդէն սկսել են հեքիաթ թուալ: Այստեղ եւս, պետական պարասխանաւորները, բնաւ հաշուի չառնելով զարգացած երկրների փորձը, կամենում են Հայաստանի հոգեմտաւոր կեանքի ոլորտները տնօրինել «ազար շուկայի» մոդելներով, չգիտես ում եւ ինչ ապացուցելու սիրոյն:

Անազարութեան եւ անարդարութեան այսպիսի պայմաններում էապէս տուժում են Հայաստանի անկախութիւնը, նրա ընթացքը, տեմպերը եւ ուղղուածութիւնը: Նման պայմաններում ծայրայեղ ընդդիմութիւնը փորձում է իշխանութեան հետ իր խնդիրները լուծել եւրոհամակարգերի միջոցով: Իսկ իշխանութիւնները, կառչելով նոյն այդ համակարգերից բխած ինչ-որ փորձագիտական կարծիքից, յօդս են ցնդեցնում, ասենք, Ընդրական օրէնագրքի բարեփոխման առաջարկների փաթեթը: Արտաքին գործերի բնագաւառում եւս անկախ քաղաքականութեան խիստ պակասն իրեն զգացնել է տալիս ամեն քայլափոխին:

Ըստ էութեան հարց է ծագում՝ ազգովին առաւել հասարակական ու յարակ չէի՞նք քայլի անկախութեան պահպանման ու ամրագրման ճամբով, եթէ ներքնապէս լինէինք ազար, եթէ ունենայինք սոցիալապէս արդար հասարակութիւն:

Անկախութեան գաղափարի կերտումը եւ նրա՝ կեանքի կոչելու փորձը բաւական չէ: Այսօր հրամայական է նրա պահպանումը, ամրապնդումը, ինչն այլեւս պէտք չէ վարահել ազատութեան եւ արդարութեան գաղափարների նկատմամբ հաւատ չընծայող հոսանքներին:

Մեր այսօրուայ քաղաքական պայքարը, իրականում, ազգային պայքար է վասն անկախութեան, վասն ազատութեան եւ վասն արդարութեան:

Հողային բարեփոխումների

20-ամյա դասերը

Բ. ՄԻՐՉՈՅԱՆ

Քսան սարի առաջ (1991 թ.) Հայաստանում լուծարվեցին հանրային խոշոր սնտեսությունները և դրանց փլուզման փրկական դերը ձևավորվեցին շուրջ 340 հազ. գյուղացիական մանր սնտեսություններ: Գյուղատնտեսության մեջ զբաղվածների թիվն արհեստականորեն ավելացավ գրեթե երկու անգամ՝ 2009 թ. դրությամբ կազմելով սնտեսության մեջ զբաղվածների ավելի քան 45%-ը, 1990 թ.-ի 17,7%-ի փոխարեն:

Նորանկախ Հայաստանը, փաստորեն, դարձավ մասնավոր հողատնտեսության ու ձեռքի աշխատանքի վրա հենված հետամնաց ագրարային երկիր, որտեղ գյուղատնտեսության համախառն արտադրանքի 97%-ը բաժին է ընկնում գյուղացիական (բնակչության) սնտեսություններին:

Փորձենք համառոտ ներկայացնել ՀՀ գյուղատնտեսության 20-ամյա արդյունքները, սնտեսությունների առջև ծառայած հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները:



Հողային բարեփոխումների գնահատականը

Տնտեսագիտության մեջ իբրևում է այն տեսակետը, որ տնտեսվարման մի ձևից մեկ այլ ձևին անցումը դաժանաբան է հարաբերականորեն երկար ժամանակ: Բարեփոխումների առաջին փուլում ստեղծվում են որոշակի իրավական, տնտեսական, կազմակերպական ու հոգեբանական նոր դրամաներ շուրջակա հարաբերություններին անցնելու համար: Երկրորդ փուլի ընթացքում ասիճանաբար իրականացվում է առաջնային անցումը (սեփականացումը), սկսում է ձևավորվել մասնավոր հասկածը, վերափոխվում են տնտեսական գործունեության ինստիտուտները, առաջանում է հասարակական հարաբերությունների նոր համակարգ, որի հիմքում ընկած է տնտեսության բազմակարգությունը:

Այդ սկզբունքների դաժանաբան հասկացումը վերաբերում է ագրարային ոլորտին, որն իր մի շարք առանձնահատկությունների դասառոտ հարաբերականորեն ավելի շատ ներդրումներ է դաժանաբանում և առանց դիտարկման ակտիվ աջակցության չի կարող ինֆորմացիոն զարգանալ, լինել արդյունավետ ու մրցունակ արտադրող: Մյուս կողմից, համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ անխուսափելի է մանր գյուղացիական (ֆերմերային) սնտեսությունների ֆայթայումը, խոշորացումն ու կոոպերացումը, սեփականության իրավունքի և ֆունկցիայի սարանջատումը: Ընդ որում՝ արտադրության արդյունավետությունը դաժանաբանավորված է ոչ թե սեփականության ձևով, այլ տնտեսվարման եղանակով և ագրարային ֆադաբանության մասով:

Նորանկախ Հայաստանի դիլեման հիմնախնդիրները, առանց նախադասարանական ու փորձական աշխատանքների, անստեղծ գյուղի աշխատավորների ու մասնագետների կարծիքը, 1991 թ. հանրային սնտեսությունների ունեց-

վածքը (հողը, անասունները, գյուղտեխնիկան) բաժանեցին գյուղի բնակիչների միջև անկախ այն հանգամանքից՝ սվյալ ընտանիքը երբևիցե զբաղվել է երկրագործությամբ, թե՞ ոչ:

ՄԱԿ-ի ամբիոնից ՀՀ առաջին նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը հայտարարեց. «Հայասանը Խորհրդային Միության հանրադատություններից առաջինն էր, որ ի գործը գտնվեց սեփականազուրկ գյուղատնտեսական հողերն ու անասնադառնությունը՝ դրանով իսկ փրկելով հայ ժողովրդին սովից»:

ՀՀ-ում սնտեսական բարեփոխումների հայրը համարվող Հրանտ Բագրատյանն իր վարչապետության տարիներին (1993-1996 թթ.), կեղծելով հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշները, ամենուրեք սկսեց գովերգել հայկական սնտեսական «հրաշքը»՝ մանր գյուղացիական տնտեսությունների կենսունակությունն ու արդյունավետությունը, միաժամանակ դարձեցավ, թե՛ «Երկու զբերիս հիման վրա Ռուսաստանում տնտեսագիտության դոկտորի կոչում ստացա»:

Անգամ ՄԱԿ-ի փորձագետները, հիմք ընդունելով ՀՀ վիճակագրական թվերը, եկան այն եզրակացության, որ Հայաստանի գյուղատնտեսությունը կատարեց «ամոռիզանի» դեր՝ մեղմացնելով արդյունաբերության արդյունքի կտրուկ անկման ազդեցությունը մարդկանց կենսամակարդակի վրա:

Նույն գայթակղիչ թվերի հիման վրա «ИЗВЕСТИЯ» թերթի մի ամբողջ էջում (30.09.1997թ.) ռուսական հայտնի հրատարակախոս, Գյուղացիական կուսակցության նախագահ Յուրի Զերնիչենկոն գովերգեց «Հայաստանի դասերը», գտնելով, որ «կոլխոզաբափումից» առաջացած անկումը բնավ էլ օրինաչափություն չէ, որ «սեփական հողի վրա ազատ աշխատանք» հին բանաձևը վիթխարի եռանդ է ազատագրում: Նույնիսկ Համաաշխարհային բանկը (ՀԲ) համոզված է, որ Հայաստանն անցումային օրջանից հետո արագ վերականգնվեց, նրա գյուղատնտեսությունը ցուցաբերում է զարգացման և արտադրողականության բարձրացման հուսադրող միտումներ՝ ինչպես առաջնային արտադրության, այնպես էլ ազրովերամեակման ոլորտներում:

Գյուղատնտեսության բնագավառի լավագույն գիտակ Վլադիմիր Մովսիսյանը նշում է. «Հողի սեփականազուրկ հումից հետո հանրապետությունում ձևավորվել էին 321 հազ. գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին, միջին հաշվով, բաժին էր ընկնում 1,3 հա վարելու հող: Եթե հաշվի առնենք, որ ամեն մի տնտեսություն, միջին հաշվով, հող էր ստացել առնվազն 4 սեղերում (սարածքներում), այսինքն՝ աշխատելու էր 4 հողակտորի վրա, առաջնակարգ հանրապետությունում գյուղատնտեսությունը վարվում էր 1 մլն. 284 հազ. հողատնտեսությունների վրա: Նման դայմաններում գրեթե անհնար է արտադրության առաջատար տեխնոլոգիաների կիրառումը, աշխատանքների մեքենայացումը, բացառվում է ճյուղի արդյունավետության բարձրացումը»:

Ակադեմիկոս Միխայել Բոթանյանի կարծիքով՝ սեփականազուրկման ընթացքում հաշվի չառնվեց մանր գյուղացիական տնտեսությունների՝ տեխնիկական միջոցներով ադառնվման խնդիրը: Նույնիսկ անտեսվեց այն փաստը, որ «վերին աստիճանի մանր տնտեսությունները» տնտեսական տեսակետից արդյունավետ լինել չեն կարող, դրանք լուծում են միայն իրենց գոյադառնության խնդիրը:

Ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը գտնում է, որ «հողի, անասունների, գյուղտեխնիկայի մասնավորեցումը գայթակղիչ էր հասկադես այն մարդկանց համար, ովքեր գյուղատնտեսության հետ ոչ մի առնչություն չունեին: Վերջիններս փեարկելով հադեսադ մասնավորեցման օգտին՝ արագորեն տեր դարձան լավագույն հողակտորներին, կոլտնտեսություններին դասկանող կթու ու մթերատու անասունների մի զգալի մասին: Գյուղացին մեծ մասամբ կանգնեց ձեռքով հողը մեակելու հարկադրանքի առջև»:

Գյուղացիական տնտեսությունների արդյունավետությունը

Վերջին հաշվով, ազրարային (հողային) բարեփոխումների գլխավոր նդատակը հողային ռեսուրսների արդյունավետ օգտագործումն է և այդ հիմքի վրա գյուղացու աշխատանքի արտադրողականության բարձրացումն ու երկրի դարենային անվտանգության ադառնվումը: Ոչ միայն Հայաստանում, այլև անցումային օրջանի շատ երկրներում «կոլխոզաբափումը» և մասնավոր սեփականության վրա դրված գյուղատնտեսությունը չլուծեցին այդ հիմնախնդիրները:

Տիդիկ օրինակ կարող է ծառայել Ռուսաստանը, որտեղ կենտրոնացված է աշխարհի սևահողերի շուրջ 40%-ը, բայց չի կարողանում կերակրել երկրագնդի բնակչության 2%-ը: Այստեղ, կարծես, ձևավորվել է բազմակարգադառն տնտեսություն, բայց անցումային օրջանում ավելի քան 2 անգամ կրճատվեց բոլոր տեսակի անասնադառնակը, վարելահողերի զգալի մասը դուրս մղվեց օրջանառությունից:

Համաձայն վիճակագրական սվյալների՝ Հայաստանը հետխորհրդային միակ հանրապետությունն է, որը խուսափել է ազրարային ձգնաժամից: ԱՊՀ երկրների գյուղատնտեսության համախառն արտադրանքն ամբողջությամբ

վերցրած՝ 2000 թ.-ին կազմել է 1991 թ.-ի 68%-ը, իսկ 2009 թ.՝ 97,2%-ը, մինչդեռ Հայաստանին համադասարանաբար՝ 112% և 192,3%: Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 10 տարում (1992-2001 թթ.) ավելացել է 25%-ով, իսկ Ռուսաստանում զրոյանցել է 29%-ով: Մինչդեռ ԱՊՀ միջդեպարտամենտական վիճակագրական կոմիտեի նույն սվյալներով՝ ՌԴ-ի գյուղատնտեսական արտադրանքը 1991 թ. գերազանցել է ՀՀ-ի ցուցանիշը 42, իսկ 2001 թ.՝ 53 անգամ: Դժվար չէ հասկանալ, որ Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1992-2001 թթ. նվազել է 44%-ով:

ԱՊՀ երկրների շարքում գյուղատնտեսության ոլորտում լավագույն ցուցանիշ ունի Բելառուսը, քանի որ այնտեղ չի իրականացվել համասարած ու հախտուն սեփականաձևերում, զանազան կողմերից են խոչընդոտվում գյուղատնտեսական կազմակերպությունները: Ունենալով 5,5 անգամ զանազան վարելահողեր, քան Ռուսաստանը, 2009 թ. դրությամբ Բելառուսը միայն 2,1 անգամ է քիչ գյուղատնտեսական արտադրանք քողարկել: Գյուղատնտեսական աշխատանքի արտադրողականությունը «բռնաժողովրդական» այդ երկրում գերազանցում է Ռուսաստանի նույն ցուցանիշը 69%-ով, Ռուսաստանին՝ երեք անգամ, Հայաստանին՝ 5, Մոլդովային ու Ադրբեյջանին՝ 8,5, Վրաստանին՝ 10,5, Տաջիկստանին՝ 20,6 անգամ:

Խորհրդային Միության կազմում մեր հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1986 թ.-ին, 1940 թ. համեմատությամբ, ավելացել է 5,4 անգամ՝ գերազանցելով Միության միջին ցուցանիշը մոտ երկու անգամ: Քանի որ Խորհրդային Հայաստանի բնակչությունը նույնպես աճում էր գրեթե երկու անգամ արագ տեմպերով, առաջ զանազան կողմերից կախվածությունը, հասկանալի հացահատիկի ներմուծման բնագավառում:

Հանրային գյուղատնտեսությունն իր բոլոր թերություններով հանդերձ ադապտվել է հանրապետության առանց այն էլ սուղ հողային ռեսուրսների հարաբերականորեն արդյունավետ օգտագործումը: Գյուղատնտեսական արտադրանքի կառուցվածքում տեղի ունեցած արմատական փոփոխություններ, ստեղծվեց բավականին հզոր ագրոարդյունաբերական համալիր: Հսկայական կապիտալ ներդրումների շնորհիվ 1985 թ.-ին, 1940 թ.-ի համեմատությամբ, ռոտովոդ հողատնտեսություններն ավելացան 73%-ով, խաղողի և յուղային սնկարկների սարածքը՝ 2,5 անգամ, կերակրամթերքի արտադրանքը՝ 3,5 անգամ, կարկանդակային և արտադրողականությունը: Խորհրդային Հայաստանն առաջինն ավարտեց գյուղական բնակավայրերի էլեկտրիֆիկացումը, առաջինն գազաֆիկացումը, լայն թափ ստացավ բնակարանային ու մշակութային շինարարությունը: Հիմնովին փոխվեց հայկական գյուղի դասակարգը:

Հանրապետության գյուղատնտեսությանը մեծ վնաս հասցրեցին գործաշուկայի հակապոլիտիկային և «անաշխատ» եկամուտների դեմ կամայականները: Այնուհետև վրա հասան ավերիչ երկրաշարժը, քաղաքական ու տնտեսական ցրտերը: Այդ ամենի հետևանքով 1987-1990 թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կրճատվեց 32%-ով, այդ թվում բուսաբուծությունում՝ 38, անասնապահությունում՝ 26,7%-ով:

ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2001-2007 թթ. ավելացել է 72%-ով: Ուստի օրինական հարց է առաջանում, թե որքանով է վերականգնվել հողօգտագործման և անասնապահության 80-ական թվականներին ձեռք բերված մակարդակը: Միակամային վիճակագրական սվյալները.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

	1986	2009	2009 թ., 1986 թ. համեմատ., %
Վարելահողեր (հազ. հա)	452.6	298.0	65.8
Պտղի և խաղողի սնկարկներ (հազ. հա)	85.4	51.3	60.1
Ռոտովոդ հողատնտեսություններ (հազ. հա)	316.4	156.0	49.3
Խոչընդոտվող անասնաբուծություններ (հազ. գլուխ)	860.7	570.6	66.3
այդ թվում կովեր (հազ. գլուխ)	319.3	273.9	85.8
ոչխարներ և այծեր (հազ. գլուխ)	1902.8	511.0	26.9
խոզեր (հազ. գլուխ)	344.3	112.6	32.7

Աղբյուրը. Народное хозяйство СССР 1988 г., Статистический ежегодник, Ереван 1989г., Հայաստանի վիճակագրական ծառայություն, Երևան 2010

Աղյուսակում բերված թվերն իրական ու խիստ մտահոգիչ ցուցանիշներ են, որոնք բնութագրում են Հայաստանում իրականացված հողային բարեփոխումների արկածախնայությունը: Բավական է նշել, որ անասնաբուծության սեփականաձևերում ընթացում անասնապահության ավելի մեծ ջարդ եղավ, քան ստալինյան համասարած կոլեկտի-



վացման սարհներին: Գյուղացիների անձնական օժանդակ սնեստություններում նույն 1986 թ.-ին ավելի շատ մանր եղջերավոր անասուն, խոզ ու թռչուն էր դասվում, քան ներկայիս գյուղացիական 338 հազ. սնեստություններում:

Հողի սեփականաձեռնումը հանգեցրեց նրան, որ շրջանառությունից դուրս մղվեցին սեխնիկական արժեքավոր մեակաբույսերը (ծխախոտ, խորդենի, շաքարի ձակընդեղ), խիստ կրճատվեցին կերային մեակաբույսերի ցանֆասարածությունները, խաղողի ու դեղատու այգիների սարածքները և համախառն բերքը: Գրեթե հիմնովին խաթարվեց սերմնաբուծական և տնտեսային գործը, դադարեցվեց կենսոնացված մեքենայական սղասարկումը:

Եվ ահա, նույն վիճակագրությունը փաստում է, որ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2009 թ. գերազանցել է 1986 թ.-ի մակարդակը 47%-ով: Իսկ եթե հաշ-

վի առնենք այն հանգամանքը, որ ժամանակի նույն ընթացքում հանրադատության առկա բնակչությունը դակասել է 12%-ով, ինչպես նաև իջել է նրա գնողունակությունը, ադա երկրի դարենային անվանագության հիմնախնդիրը կարելի է համարել լուծված:

Գյուղացու աճխասանֆի արդյունքը

Ի՞նչ է սալխս գյուղատնտեսական գործունեությունը գյուղացուն և իր աճխասանֆի արդյունֆի ո՞ր մասն է նա վասակում: Այս հիմնախնդիրը բավականին հանգամանորեն ֆննարկվում է ՀՀ «Կայուն զարգացման ծրագրում» (ԿԶԾ), որը հաստատվել է ՀՀ Կառավարության 2008 թ. հոկտեմբերի որոշմամբ և որն ըստ էության Աղբասության հաղթահարման ռազմավարական ծրագրի (ԱՀՌԾ) վերանայված սարքերակն է:

ԿԶԾ-ում նշված է. «Գյուղատնտեսության կայուն և չղակասող զբաղվածության մակարդակի դաիդանման արդյունֆում էականորեն մեծացավ խզումը գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական ոլորտների արտադրողականության միջև: Եթե աճխասանֆի արտադրողականությունը գյուղատնտեսությունում 1996 թ.-ին կազմում էր ոչ գյուղատնտեսական ոլորտի մոտ երեք ֆառորը, ադա 2006 թ.-ին համարյա չորս անգամ ավելի ցածր էր»: Մյուս կողմից, աճխասանֆային եկամուտները գյուղատնտեսությունում 1996-2006 թթ. ընթացքում անվանական արտաիայտությամբ աճել են մոտ 5,9, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտում միջին աճխասավարձը՝ 7,2 անգամ: Արդյունֆում՝ միավոր աճխասանֆի արժեքը (աճխասավարձի և աճխասանֆի արտադրողականության հարաբերակցությունը) գյուղատնտեսությունում 1996 թ.-ի 28,94%-ից 2006 թ.-ին հասել է 78,82%-ի, մինչդեռ ոչ գյուղատնտեսական ոլորտում մնացել է նույն ցածր (մոտ 25%) մակարդակի վրա:

Այս ամենից արվում է հետևությունը, որ գյուղատնտեսության աճի ֆինանսավորման և գործունեության դայմանների բարելավման հնարավորությունները ներին ռեսուրսների հաշվին նկատելիորեն ավելի ցածր են, քան ոչ գյուղատնտեսության ոլորտում: Եթե գյուղացին սանում է իր աճխասանֆի արդյունֆի գրեթե 80%-ը, իսկ ոչ գյուղատնտեսական ոլորտի աճխասողը՝ միայն 25%-ը, ադա կարելի է եզրակացնել, որ նորանկախ Հայաստանը դասմության մեջ միակ երկիրն է, որտեղ գյուղն ադում է ֆաղաֆի հաշվին: Նման «հրաճի» հիմնական գաղտնիֆն այն է, որ դետությունն ակտիվ ֆինանսական աջակցություն է ցույց սալխս գյուղացիական սնեստություններին՝ խրախուսելով սեփական արտադրության հաշվին գյուղմթերֆներով ադաիովման աստիճանի բարձրացումը և արտաիանման կտրուկ ավելացումը:

Այս բոլոր ինֆնահանգսացնող և սխալ եզրակացությունները կառուցված են վիճակագրական սլյալների միակողմանի վերլուծության վրա և չեն արտացոլում գյուղատնտեսության ոլորտում սարհների ընթացքում կուտակված սագնատալից իրավիճակը: Օրինակ, ինչդե՞ս են որոշվել աճխասանֆային եկամուտները գյուղատնտեսությունում: Բնակչության եկամուտների կառուցվածֆի մասին ֆիչ թե շատ հավաստի տեղեկասվություն է սալխս սնային սնեստությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը (ՏՏԿԱՀ), որն իրականացնում է ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ)՝ սկսած 1998-1999 թթ.-ից: Ահավաստիկ այդ սլյալները.

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Գյուղատնտեսական գործունեությունից գյուղական բնակավայրերի
 սնային սնեստության եկամուտը (մեկ շնչի հաշվով, միջին ամսական, դրամ)

	1999	2001	2002	2003	2004	2005	2006	2007	2008	2009
Գյուղմթերքի և անասունի վաճառք	5715	5144	1329	3232	3810	4190	4479	4197	4670	4610
Սննդամթերքի սղառում սեփական սնեստությունից	4643	4551	4819	4281	4154	5378	6334	5262	5642	5157
Ընդամենը	10356	9695	6148	7513	9072	9568	10813	9459	10312	9767
%-ով՝ ամբողջ եկամտից	77.2	59.0	50.9	53.2	58.8	50.8	48.2	41.3	38.8	35.7

ՀՀ բնակչության եկամուտներն ու ծախսերը և սննդամթերքի սղառումը 1999-2001 թթ., Վիճակագրական սարեգիրք 2002, Հայաստանի սոցիալական դասերը և աղբյուրները: Վիճակագրական վերլուծական զեկույցներ, 2004, 2006, 2008, 2009 թթ.

Ինչդեռ շեղում են, վերջին տարիների (2000-2009 թթ.) ընթացքում գյուղատնտեսական գործունեությունից գյուղական բնակավայրերի սնային սնեստությունների եկամուտը նույնիսկ ընթացիկ գներով չի ավելացել, չնայած գյուղացու աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է մոտ 90%-ով, իսկ արտադրանքը՝ 72%-ով: Նույն ժամանակում դարձնային աղբյուրների գներն աճել են 49%-ով, ինչը չի նպաստել գյուղատնտեսական գործունեությունից գոյացող եկամուտների ավելացմանը: Գյուղացին իր աշխատանքի արդյունքից սացած եկամտի մեծ մասը ծառայում է ծախսել ընտանիքը կերակրելու համար, մինչդեռ գյուղմթերքի ու անասունի վաճառքից սացած եկամուտը նույնիսկ բավարար չէ ընտանիքի մյուս հոգսերը բավարարելու համար: Եթե անգամ ընդունենք, որ հարցումների ժամանակ իրական եկամուտներն ինչ-որ չափով թաքցվում են, ապա ընդհանուր օրինաչափությունը՝ գյուղատնտեսական գործունեությունից սացված եկամուտների նվազման միտումը չի փոխվում:

ԿԶԾ-ի հեղինակները, ըստ երևույթին, գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական եկամուտները համեմատելիս հիմք են ընդունել վարձու աշխատանքի (աշխատավարձի) սարբերությունները: Բայց դա հիմնովին սխալ մոտեցում է, քանի որ գյուղատնտեսության մեջ վարձու աշխատողների շեղանկար կեղծ խիստ ցածր է (2009 թ. 2,4 %): Նշենք նաև, որ սնեստության մյուս ոլորտներում աշխատավարձը եկամտի միակ, նույնիսկ գլխավոր աղբյուրը չի հանդիսանում: Իր հերթին, զբաղվածության վերաբերյալ ընթացիկ վիճակագրական տվյալները չեն արձանագրում իրականությունը:

Այս հարցերն առանձին ֆննարկման առարկա են: Բերենք միայն մեկ արտառոց օրինակ. շինարարությունում 10 տարիների ընթացքում (1998-2007 թթ.) շինարարական աշխատանքի ծավալն ավելացել է 8,5 անգամ, իսկ զբաղվածությունը կրճատվել է 2 անգամ: Արդյունքում՝ շինարարի աշխատանքի արտադրողականությունը բարձրացել է 17 անգամ, մինչդեռ շինարարի ամսական իրական աշխատավարձը՝ 3,2 անգամ: Նույն ժամանակահատվածում գյուղմթերքի վերավաճառողն ավելի քան նոր արժեք է ստեղծում և իր աշխատանքի արդյունքի ավելի փոքր մասն է ստանում, քան չարժեք գյուղացին:

Ճամարությունը բացահայտվում է համեմատությունների օգնությամբ: Կոլտնտեսություններում ու խորհրդակցություններում 1986 թ. դրությամբ աշխատում էին 200 հազ., իսկ գյուղացիական սնեստություններում 2009 թ.՝ 481 հազ. մարդ, որից 11,6 հազարը՝ վարձու աշխատող: Ընդ որում՝ հանրային սնեստություններում ամսական աշխատած մարդու ժամանակը կազմում էր 22 օր, մինչդեռ ներկայիս գյուղացին շաբաթվա ընթացքում միջին հաշվով աշխատում է 20 ժամ: Միաժամանակ նա երեք անգամ վաս է զինված գյուղտնտեսականությամբ, քան կոլտնտեսականը և խորհրդակցության բանվորը:

Ուշագրավ են նաև վիճակագրական հետևյալ տվյալները. կոլտնտեսականը նույն 1996 թ. դրությամբ վասակել է իր աշխատանքի արդյունքի (համախառն արտադրանքի) 43,1%-ը, իսկ կոլտնտեսության շահույթի հետ միասին՝ 60,4%-ը: Մեկ կոլտնտեսականի հաշվով դա կազմում էր ամսական 246 ռուբլի, որը համադրելի գներով համազոր է 2009 թ. 173 հազ. դրամին: Բայց կոլտնտեսականն ուներ նաև անձնական օժանդակ սնեստություն և օգտվում էր սղառման



հանրային ֆոնդերից (անվճար ուսուցում, բուժում, արձակուրդից ու հանգստյան սներից ձրի և արժույթի օգտվելու իրավունք և այլն): Գյուղատնտեսական գործունեությունից սացած եկամուտը կազմում էր կոլտնտեսականի ընդհանրի ամբողջական եկամտի 67%-ը, իսկ աշխատավարձը՝ 17,1%-ը: Սննդի սղառման վրա ծախսվում էր ամբողջ եկամտի 37,6%-ը՝ ունենալով խնայողություն 7%-ի սահմաններում:

Այս առումով հողատեր գյուղացին հայտնվել է բացարձակ թեմա իրավիճակում: Եթե հիմք ընդունենք ՏՏԿԱՀ-ի 2009 թ. սվյալները, աղա 4,2 շնչից բաղկացած գյուղական սնային սնեստությունը գյուղատնտեսական գործունեությունից սացել է ամսական 41,1 հազ. դրամ (ամբողջական եկամտի 35,7%-ը), վարձու աշխատանքից՝ 30,5 հազ. (26,5%), ինքնագրադավածությունից՝ 3,6 հազ.

(3,1%): Այսպիսով, գյուղացու ընդհանրի աշխատանքային եկամուտները կազմել են 75,2 հազ. դրամ (ամբողջական եկամտի 65,3%-ը): Համեմատության համար նշենք, որ միայն անձնական օժանդակ սնեստությունից կոլտնտեսականի ընդհանրի եկամուտը կազմում էր 1986 թ. դրությամբ նրա ամբողջական եկամտի 25,2%-ը, ամսական՝ 108 ռուբ., որն իր գնողունակությամբ հավասար է 2009 թ. 76 հազ. դրամին:

Ո՞րն է գաղտնիքը: Անհատական օժանդակ սնեստությունում գրեթե ոչ մի դրամական արժույթական ծախս չէր կատարվում: Գյուղացին անարգել օգտվում էր հանրային արժույթային ու խոշարհներից, մշակում ոչ թե հացահատիկ, այլ բանջարաբոսանային բույսեր, դահում մթերատու անասուններ, ամբողջ սնամեձ սարածիք դարձնելով ղոշատու այգի, ջերմոցներ, իսկ արժույթային վաճառում էր շուկայում, որտեղ գներն ավելի բան երկու անգամ բարձր էին, բան դեսական խանութներում:

Ներկայիս հողատեր գյուղացին ստիպված է հսկայական արժույթական ծախսեր կատարել, որոնք հաճախ չեն փոխհատուցվում սացված բերքի իրացման հաշվին: ՀՀ ԱՎԾ-ի գյուղատնտեսական վիճակագրության բաժնի վարիչ Ա. Ավագյանի հաշվարկներով՝ գյուղատնտեսության ոլորտում «արժույթային բաժին է ընկնում իր իսկ կողմից արժույթային գյուղատնտեսական մթերքի իրացումից սացված համախառն եկամտի միայն 20-25%-ը»: Այդ գնահատականը սրվել է 2004 թ. բերառատ սարում, երբ գյուղատնտեսությունից սացված եկամուտը 2003 թ. համեմատությամբ ավելացել է մոտ 21%-ով: Մինչդեռ հեսագա սարիներին նույն ցուցանիշը, ինչպես ցույց է սրված Աղյուսակ 2-ում, չի բարելավվել, համադրելի գներով՝ 2005-2009 թթ. նույնիսկ 12%-ով իջել է, չնայած գյուղատնտեսական արժույթային գյուղացիական (բնակչության) սնեստություններում ավելացել է 23,5 %-ով:

Գյուղացուն հուզող հիմնախնդիրները

Վերոհիշյալ համառոտ վերլուծությունից մենք գալիս ենք այն համոզմանը, որ գյուղացիական մանր սնեստությունները լիովին սղառել են ներքին չօգտագործված ռեսուրսների հաշվին զարգացման հնարավորությունները, չեն կարող լինել մրցունակ թե՛ ներքին և թե՛ հասկաղես արժույթային շուկայում, իսկ վրա հասած գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի դայմաններում դարձաղես ենթակա են համատարած սնանկացման ու կործանման: Համեմատության համար բավական է նշել, որ «մեծ դեղերսիայի» սարիներին (1929-1933 թթ.) մոտ 900 հազ. ֆերմերային սնեստություններ (ֆերմերների 14%-ը) ԱՄՆ-ում հարկադրաբար վաճառվել են՝ դարձել ու հարկերը չվճարելու դատառով:

Դեռևս 2006-2007 թթ., երբ ՀՀ գյուղատնտեսությունը որոշակի վերելք էր աղում, ՄԱԿ-ի փորձագետները ՀՀ 9 մարզերում անցկացրած հեսագոտության ընթացում առանձնացրին հողատեր գյուղացուն մտահոգող հեսկյալ սասը հիմնախնդիրները.

1. **Հաճախակի երաշը և կարկուտը և այդ կաղակցությամբ անհրաժեշտ ծառայությունների բացակայությունը:** Ընդ որում, «ֆերմերները կորցրած բերքի դիմաց որևէ փոխհատուցում չեն սանում կամ կառավարությունից սանում են չնչին փոխհատուցում»:

2. **Ոռոգման դայմանների և ցանցի անբավարարությունը:** «Ոռոգման բացակայության դայմաններում հողերի մեծ մասը չի մշակվում և գյուղերից շատերում վերածվում է խոշարհի»: Բոլորն էլ բողոքում են, որ ոռոգման ջրի վարձը թե՛ բարձր է և թե՛ անկանոն է մատակարարվում:

3. **Սերմացու, ֆունկցիաներ, ղեւսիցիդներ և դիզելային վառելիք գներու անկարողությունը:** Այդ ամենը դաշտանում է մեծ ծախսեր և դասճառ է դառնում հրաժարվելու հողի մեակումից: Մյուս կողմից՝ «դեկտորները բավարար ֆայլեր չի ձեռնարկում հողի արդյունավետ օգտագործում և բերքի բազմազանեցում ադախովելու ուղղությամբ»:

4. **Գյուղատնտեսական մեքենաների դակասը:** Հիմնականում օգտագործվում են խոհրդային ժամանակներից ժառանգած բարոյադես ու ֆիզիկադես մաւված մեքենաները, իսկ «ֆերմերային աւխասանքի մեծ մասը կասարվում է ավանդական միջոցներով, լայն սարածում ունի ձեռքով կասարվող աւխասանքը»:

5. **Բանկային վարկերի մասշեղիությունը:** «Վարկերը սրվում են մեկ սարքի ժամկետով, 20% դրույֆաշափով»: Այս գործընթացը կադված է մեծ ֆաւււուկների հետ, իսկ «ֆերմերներից աւսերը չեն կարողանում ժամանակին կասարել սոկոսագումարների և վարկերի մարումները, ուրի հետևանքով գրկվում են իրենց գույքից»:

6. **Լավ ձանադարհների բացակայությունը խանգարում է գյուղացիներին իրենց ադրանքը հասցնել աուկա:** Այդ դայմաններում վաձառականները գյուղմքերը «գնում են ցածր գներով՝ մեծ բեռ դներով գյուղացիների վրա»:

7. **Իրացման ցածր գները և սեղական աուկաների սահմանափակ ծավալները:** Ֆերմերների կարծիքով արսադրության ինֆնարժեքի համեմատ արսադրանքի իրացման գինը աւս ցածր է, իսկ գործարար միջավայրը գյուղերից աւսերում քերի է զարգացած, ուն ավելի է դժվարացնում ֆերմերների գործը:

8. **Վերամաւկման արսադրամասերի դակասը բնորու է գյուղական աւս բնակավայրերի, չկան նորմալ խանութներ և սառնարաններ:** Գյուղացիները նւում են, որ նախկինում մեկ կով ունենալն ավելի աւսուքաբեր էր, ֆան այժմ սասը կով ունենալը:

9. **Անասնադախության հետ կադված խնդիրները և անասնաբուժական ծառայությունների բարձր արժեքը:** Հասկադես անասնաբուժական դեղորայքը բավական քանկ արժե և ֆերմերներից աւսերի համար մասշեղի չէ: Գյուղացիները հնարավորություն չունեն բարելավել անասունների ցեղասեսակները և նրանց համար մսուրաշիդ գոմերում հարմար դայմաններ սեղծել:

10. **Տեխնիկական սեղեկաւությունը և տեխնոլոգիաների անհասանելիությունը մսահոգում է գյուղացուն, ֆանի որ նա սեղյակ չէ, քե ինչ որակի դեղամիջոցներ, դեսիցիդներ, դարարսանյութ է գնվում, ինչդես է այդ ամենն օգտագործվում:** Գյուղատնտեսությունը սարբեր բնույթի ծառայությունների անհամեմատ ավելի աւս կարիք ունի, ուրից, փասսոբեն, գրկված է հողաւսեր հայ գյուղացին:

ՏՏԿԱՀ-ի սվյալները նույնդես հասսասում են այն դառն իրողությունը, որ գյուղական ադֆասության հադթահարմանը և գյուղական վայրերի զարգացմանը խոչընդոտող հիմնական գործոնը ինչդես ֆիզիկական, այնդես էլ ֆինանսական ենթակառուցվածքների քերզարգացածությունն է: Ադֆասության մակարդակը բարձր է հենց այն «սնային սնեսություններում, ուոնք հողագուրկ են կամ ունեն աւս փոքր հողակսոր, հողի ոռոգման սահմանափակ հնարավորություն, չունեն կամ ունեն աւս ֆիչ գյուղտեխնիկա կամ արսադրական հնարավորություններ, ունեն սահմանափակ ֆինանսական հնարավորություններ»:

Ինչդես ցույց են սալիս 2009 թ. հարցումների արդյունքները, հողը չմաւկելու հիմնական դասճառներն են. մաւկելը ձեռնսու չէ (23,9%), հողը չի ոռոգվում (20,7%), մաւկելու համար փող չկա (18,8%), հողաւսերը հիվանդ է կամ ծեր (11,9%), հողը վասոբակ է (11,3%), աւս է հեռու (8,2%): Վերջին հաւվով, գյուղացին գերադասում է լինել վարձու աւխասող կամ սսանալ քոաակ ու նդաս, ֆան գրադվել երկրագործությամբ: Բավական է նւել, որ դեսական քոաակների ու նդասների տեսակարար կեղոր գյուղական բնակավայրերի սնային սնեսությունների ամբողջական եկամքի մեջ 2009 թ. կազմել է 20,7, մինչդեռ գյուղմքերի և անասունի վաձառքինը՝ 16,8%:

ՀՀ կառավարությունը մինչև 2011 թ. գյուղատնտեսության մեջ կոսակված վերոհիււայ խիս բացասական միսումներին ու հիմնախնդիրներին փասսոբեն լուրջ ուադրություն չի դարձել, բավարարվելով սարբեր տեսակի «ռազմավարական» ծրագրեր կազմելով, ուոնցում բացակայում են գիսական լուրջ վերլուծությունները: Պարենային ադրանքների կսրուկ աձը, ագրարային ոլորսում ակնհայտ խոր ձգնաժամը սիդեցին գյուղատնտեսությունը համարել առաջնային ու ծախսային ոլորտ, ափվել գյուղի աւխասավորի հետ, լսել նրա ձայնը և ուոաակի միջոցառումներ ձեռնարկել նրան ֆինանսական ու այլ օժանդակություն ցույց սալու ուղղությամբ:



ԼԵՌՆԱՄԵՏԱԼՈՒՐԳԻԱԿԱՆ

ՀԱՄԱԼԻՐԻ ՉԱՐԳԱՑՄԱՆ

ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

Աշոտ Եղիազարյան

Մետաղական հանածոների արդյունահանումը և մետաղների արտադրությունը միշտ էլ կարևոր դեր են խաղացել Հայաստանի տնտեսական կյանքում: Խորհրդային տարիներին Հայաստանը առաջատար դիրքեր է գրադեցրել մոլիբդենի, պղնձի և ոսկու արդյունահանման և վերամշակման ոլորտում: Ավելին, դրանց հիման վրա Հայաստանում զարգացած է եղել նաև մետաղամշակման արտադրությունը:

Իր հետաքրքիր և բարդ երկրաբանական կառուցվածքի շնորհիվ Հայաստանն ունի օգտակար հանածոների բազմազան պաշարներ: Ըստ ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների, ՀՀ տարածքում հայտնաբերված են

մետաղների ավելի քան 38 տեսակ: Սակայն, Պաշարների պետական հաշվեկշռում հաշվառված են հետազոտված և նախնական գնահատված միայն 18 տեսակ մետաղների պաշարներ¹: Մի շարք օգտակար հանածոների ուսումնասիրված և նախնական գնահատված պաշարներով Հայաստանը առաջատար տեղ է գրավում Հարավային Կովկասում: Համաձայն ԽՍՀՄ Օգտակար հանածոների պետական հաշվեկշռի, 01.01.1991 թ. դրությամբ Անդրկովկասի մոլիբդենի պաշարների 99,9%-ը, ոսկու 80, պղնձի 85 և երկաթի ավելի քան 50%-ը հաշվառված են եղել Հայաստանի տարածքում: Երկաթի հանքաքարի արդյունաբերական պաշարները հաշվվում են մոտ մի քանի հարյուր միլիոն տոննա, պղնձի, կապարի և ցինկի պաշարները՝ մի քանի միլիոն տոն-

նա, մոլիբդենինը՝ մի քանի հարյուր հազար տոննա, ոսկին և արծաթը միասին՝ մի քանի հազար տոննա²:

1990-ական թվականներին ոլորտի զարգացումը որոշակի հետընթաց ապրեց, սակայն ներկայումս արդյունաբերության այս հատվածում արտադրությունը ամբողջությամբ վերականգնվել է, ինչին մեծապես նպաստել է այդ մետաղների համաշխարհային գների և պահանջարկի աճը: 2010 թ. մետաղական հանքաքարի արդյունահանման և հիմնային մետաղների արտադրության ծավալը կազմել է 280,6 մլրդ. դրամ (\$751 մլն.) կամ ՀՆԱ-ի 8%-ը: Հայաստանից պղնձի հանքաքարի և խտանյութի արտահանումը 2010 թ. կազմել է 118 հազ. տոննա³: Պղնձի

1. ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Ընդերքօգտագործման էկոնոմիկա, <http://webcache.googleusercontent.com/search?q=cache:K-GsavhXzkcJ:www.mineconomy.am/am/24/>

2. Նույն տեղում:

3. ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ 2010 թվականի հունվար-դեկտեմբերին, <http://www.armstat.am/am/?nid=82&id=1215>

հանքաքարի նման ծավալներով արտահանումը ռեկորդային է Հայաստանի պատմության ընթացքում: 2010 թ. Հայաստանի արտահանման ծավալների ավելի քան 40 տոկոս աճը հիմնականում ապահովվել է պղնձի և մյուս գունավոր մետաղների հաշվին: 2010 թ. արժեքային արտահայտությամբ արտահանվել է 210 մլն. դոլարի պղնձի հանքաքար (արտահանումների ընդհանուր ծավալի 20 տոկոսը), 92 մլն. դոլարի չըզտված պղնձ, 120 մլն. դոլարի ֆեռոնոլիթրեն, 28,5 մլն. դոլարի ոսկի (1,6 տոննա), 15 մլն. դոլարի մոլիբդեն (470 տոննա), 14 մլն. դոլարի ցինկի հանքաքար (16 հազ. տոննա), 78 մլն. դոլարի ալյումինի նրբաթիթեղ (25 հազ. տոննա): Այսպիսով՝ բոլոր գունավոր մետաղների արտահանումը կազմել է մոտ 557 մլն. դոլար, կամ արտահանման 55 տոկոսը⁴:

Հայաստանի առևտրային հաշվեկշռի բացասական սալդոյի ֆոնի վրա վերը բերված ցուցանիշները առաջին հայացքից տպավորիչ և հուսադրող են, խոսում են տնտեսության այդ ճյուղում տեղի ունե-

ցող դրական տեղաշարժերի մասին: Սակայն, ճյուղի առկա վիճակի, զարգացման միտումների, տնտեսությունում դրա ունեցած դերի առանձնահատկությունների նկատմամբ համակարգային մոտեցման դեպքում մենք հանգում ենք այլ եզրակացության: Միանշանակ կարող ենք հաստատել, որ ճյուղի զարգացման նկատմամբ 2000-ական թվականների սկզբներին (երբ ընդունվեցին ոլորտի հարաբերությունները կարգավորող հիմնական օրենքները և մասնավորեցվեցին ճյուղի ձեռնարկությունները) գերիշխող պարզունակ մոտեցումը չի փոխվել: Այդ մոտեցմամբ առաջնորդվելու դեպքում հնարավոր չէ նպաստել Հայաստանի տնտեսությունում որակական փոփոխությունների առաջացմանը:

Միջազգային փորձից հայտնի է, որ երբ հումքային ճյուղը դառնում է որոշիչ երկրի տնտեսական կյանքում, ապահովում է արտարժույթի հիմնական ներհոսքերը երկիր, ապա տվյալ տնտեսությունը բախվում է այսպես կոչված «հոլանդական հիվանդություն» սինդրոմի հետ⁵:

Ճիշտ է, Հայաստանի վճարային հաշվեկշռի ներկայիս կառուցվածքը այնպիսին է, որ լրա-



Ամուլսարի ոսկու հանք

ցուցիչ արտարժույթային մուտքերը չեն կարող նման բացասական էֆեկտ ունենալ, ավելին՝ կարող են հաշվեկշռել սալդոն, կրճատել արտաքին պարտքը և մակրոտնտեսական այլ առավելություններ տալ, սակայն դրանց կտրուկ աճը, մասնավոր տրանսֆերտների հետ համակցությամբ, այնուամենայնիվ, կարող է ազդել արժույթային կուրսի ձևավորման վրա: Բացի այդ, տնտեսության երկարատև կախվածությունը բնական ռեսուրսների արտահանումից թուլացնում է վերամշակող ճյուղերի զարգացման և նոր տեխնոլոգիաների ստեղծման խթանները: Կապիտալը կենտրոնանում է հումքային և այն ճյուղերում (ֆինանսներ, առևտուր և սպասարկման այլ ոլորտներ),

4. Pres.am, 26-02-2011

5. «Հոլանդական հիվանդությունը» բացասական էֆեկտ է, որ թողնում է ազգային արժույթի արժևորումը տնտեսական զարգացման վրա տնտեսության առանձին հատվածում արձանագրվող բումի արդյունքում: Տեսականորեն բումի պատճառը նշանակություն չունի, բայց գործնականում այդ էֆեկտը, որպես կանոն, կապված է օգտակար հանածոների հանքավայրերի բացման կամ հումքի արտահանման գների բարձրացման հետ: Արտահանման եկամուտների աճը հանգեցնում է լրացուցիչ արտարժույթի ներհոսքի: Արդյունքում ազգային արժույթի անվանական փոխարժեքն աճում է, իսկ արտարժույթինը՝ ընկնում: Ազգային արժույթի իրական քանակացումը իջեցնում է արտաքին արտադրողների հետ մրցակցող սեկտորի մրցունակությունը: Երկարաժամկետ հեռանկարում «հոլանդական հիվանդությունը» հանգեցնում է ռեսուրսների տեղաբաշխմանը վերամշակող սեկտորից դեպի հումքային և սպասարկող սեկտորներ, որոնք ստեղծում են ավելի փոքր մեծության ավելացված արժեք: Արդյունքում՝ վերամշակող ճյուղերում կրճատվում է թողարկումը և արտահանումը, ինչը հանգեցնում է գործազրկության աճի, ավելանում է ներմուծումը, իջնում է զուտ արտահանումը և, վերջին հաշվով, ներքին համախառն արտադրանքը: Այդ էֆեկտն իր անվանումը ստացավ Հոլանդիայի կողմից 1959 թ. բնական գազի հանքավայրերի շահագործումից հետո: Գազի արտահանման աճը 70-ական թվականներին հանգեցրեց սղաճի և գործազրկության ավելացմանը, վերամշակող արդյունաբերության արտադրանքի արտահանման ծավալների և եկամուտների աճի տեմպերի անկմանը:

որոնք ապահովում են «րոպեական» շահույթ:

Կարևորելով հանքարդյունաբերության դերը և նշանակությունը մեր երկրի տնտեսական կյանքում, հաշվի առնելով վերը նշված և մի շարք այլ առանձնահատկություններ, կարծում ենք, որ ոլորտի զարգացման վերաբերյալ ներկայումս ձևավորված պարզունակ մոտեցումը ամենևին էլ չի բխում պետական շահերից և, ըստ էության, համահունչ է որոշ անհատների ու կազմակերպությունների նեղ շահադիտական ձգտումներին ու ցանկություններին:

Ընդերք օգտագործման գործող օրենսդրությունը և ձեռնարկատիրական պրակտիկան բազմիցս ենթարկվել են միջազգային և տեղացի փորձագետների սուր քննադատությանը՝ բնապահպանական, հարկային և այլ առումներով: Լուծո՞ւմ է, արդյոք, այդ խնդիրները նոր օրենսգրքի նախագիծը: Հնարավո՞ր է, արդյոք, լուծել ոլորտի բազում խնդիրներն առանց ճյուղի զարգացման պետական ռազմավարական պլանավորման մշակման: Մեր կարծիքով՝ ոչ: Ընդ որում, նույնիսկ կատարյալ օրենսդրության պայմաններում, ոլորտի ոչ մի խնդիր պատշաճ մակարդակով չի լուծվի, քանի

դեռ ճյուղի ապագայի վերաբերյալ գոյություն չունի զարգացման համապատասխան պետական ռազմավարություն:

Կարելի է առանձնացնել ոլորտում առկա խնդիրներից հետևյալները.

- Հանքարդյունաբերության կողմից բնությանը, տնտեսությանը և բնակչությանը պատճառվող հսկայական վնասները համարժեքորեն չեն փոխհատուցվում մասնավոր շահագործողների կողմից: Բոլոր այդ ծախսերն ըստ էության մնում են պետության և ապագա սերունդների վրա:

- Հանքարդյունաբերողներն այսօր Հայաստանից արտահանում են հանքաքարերի կիսաարտադրանքը՝ խտանյութերը, առանց նրանցում առկա օգտակար տարրերը կորզելու: Արդյունքում՝ պետությունը ոչ մի լուծման չի ստանում իր սեփականությունը հանդիսացող այդ օգտակար և թանկարժեք տարրերի արտահանումից: Շահույթի այդ մասը յուրացնում են օֆշորային գոտիներում գրանցված և Հայաստանում գործունեություն իրականացնող կազմակերպությունները:

- Լեռնամետալուրգիան Հայաստանի տնտեսության ամենաշահութաբեր ճյուղն է, սակայն այն գործում է ընդհանուր հարկային դաշտում: Ավելին՝ օգտը վում է արտահանման համար

Պղնձի հանք



ավելացված արժեքի հարկ չվճարելու արտոնությունից (իսկ ճյուղի արտադրանքն հիմնականում արտահանվում է): Արդյունքում՝ ընդերք-օգտագործող մասնավոր կազմակերպությունները ոչ միայն չեն վճարում այստեղ ստացվող «լեռնային ռենտան», այլև իրենց մասշտաբների համեմատ չնչին հարկեր են վճարում պետական և տեղական բյուջեներ⁶:

- Ոլորտում ստեղծված ընդհանուր իրավիճակը, այդ թվում աշխատողների սոցիալական պայմանները ոչ մի կերպ չեն խրախուսում նոր տեխնոլոգիաների կիրառմանը և աշխատանքի արտադրողականության բարձրացմանը: Հարկման գործող ռեժիմի պայմաններում, շահագործողների կողմից այդ նպատակներով հավելյալ ծախսերի կատարումը դառնում է անիմաստ:

6. Ըստ «Էկոլորի», Հայաստանի պետական բյուջե բազմամետաղային հանքավայրեր շահագործող, երկրից ոսկի, պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր և հազվադեպ մետաղներ արտահանող ամենախոշոր հանքարդյունաբերական ընկերություններից մուտք գործող գումարային եկամուտը կազմել է բյուջեի ամբողջ եկամտային մասի ընդամենը 1,37%-ը: Բացի այդ, այս ճյուղում գոյություն ունի մեծ սովոր: «Էկոլորի» տեղեկացմամբ, ըստ Համաշխարհային բանկի երևանյան գրասենյակի նախկին ղեկավար Արիստոմենե Վարուդակիսի, սովորը մեծ է հատկապես հանքարդյունաբերության ոլորտում: «Ես չեմ կարող ասել, թե որքան է կազմում թերհարկումը հանքարդյունաբերության ոլորտում. դա լուրջ հետազոտության նյութ է: Սակայն հանքարդյունաբերության հարկման օրենսդրությունը Հայաստանում շատ ավելի ցածր մակարդակի վրա է, քան աշխարհի շատ երկրներում», - ասել է Ա. Վարուդակիսը Հայաստանում իր առաքելությունը ավարտելուց առաջ:

- Ներկայումս կառավարությունը լիարժեքորեն չի տիրապետում օգտակար հանածոների և ընդերքի հարստությունների վերաբերյալ արժանահավատ տվյալների, քանի որ թույլ վերահսկողություն ունի ընդերքը շահագործող մասնավոր կազմակերպությունների վրա, որոնք վերահսկվում են օտարերկրյա ներդրողների, օֆշորային գոտիներում գրանցված կազմակերպությունների կողմից:

- Նոր պղնձաձուլարանի կառուցման մասին հայտարարությունները մնում են ընդամենը որպես բարի ցանկություններ: Ներկայումս ոլորտում գործող ոչ մի մասնավոր կազմակերպություն չափազորված չէ այդպիսի ձեռնարկության հիմնմամբ, քանի որ պահանջվում են ոչ միայն ներդրումներ, այլև առաջացնում լրացուցիչ պարտավորություններ ԱԱՀ-ի, գործունեության թափանցիկության մասով և այլն: Ո՞վ պետք է կատարի այդ ներդրումը, ինչպե՞ս պետք է պղնձաձուլարանի հետ աշխատեն տարբեր՝ հակասական շահեր ունեցող հանքարդյունահանողները, ո՞վ պետք է համակարգի այդ աշխատանքները: Այսպիսի և նման շատ հարցեր մնում են անպատասխան:

- Օրենսգրքով սահմանված ընդերքօգտագործման իրավունքի փոխանցելիությունը կարող է պայմաններ ստեղծել ընդերքի հարստություններն առք ու վաճառքի առարկա դառնալու համար, ինչը անթույլատրելի է ազգային

Մոլիբդենի հանք



անվտանգության առումով: Արդեն այսօր մենք այդպիսի պրակտիկայի բազմաթիվ օրինակների ականատեսն ենք: Բացի այդ, ներկայումս գոյություն չունի հանքավայրերի շահագործման որևէ սահմանափակում (ո՞ր հանքավայրերը պետք է շահագործվեն, ո՞ր հանքավայրերը ընդհանրապես չի կարելի շահագործել, ո՞ր հանքավայրերը պետք է պահպանվեն սերունդների համար):

Մենք համոզված ենք, որ վերը նշված խնդիրները հնարավոր է լուծել միայն ճյուղի ձեռնարկությունների ազգայնացման և հանքարդյունաբերական ու մետաղաձուլական խոշոր պետական ձեռնարկության ստեղծման և ճյուղի զարգացման ռազմավարական պլանավորման ճանապարհով:

Պետական ձեռնարկությունների զարգացումն ունի տարբեր պատճառներ՝ պատմական, պատահական, ֆինանսական, տեխնիկական, դոկտրինալ և այլն: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է դոկտրինալ պատճառը, որը սովորաբար պայմանավորված է լինում տնտեսական և սոցիալական բարեփոխումների անհրաժեշտությամբ: Հենց այս պատճառով տարբեր ժամանակներում և եվրոպական տարբեր

երկրներում ոգեշնչվել են ազգայնացումների ամբողջ շարքեր: Այս խնդրի լուծումը ստացել է նույնիսկ սահմանադրական ձևակերպումներ: Օրինակ, Վեյմարյան սահմանադրությունը հայտարարում էր, որ պետությունը կարող է ստեղծել պետական ձեռնարկություններ ոչ միայն այն ժամանակ, երբ մասնավոր սեփականատերերն ի վիճակի չեն ծածկել արտադրության ծախսերը, այլև ամեն անգամ, երբ շոշափվում են նրա քաղաքական կամ սոցիալական շահերը: Այլ խոսքերով, պետական ձեռնարկության ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է այսպես կոչված «ընդհանուր շահի» պաշտպանությամբ:

Ներկայումս Հայաստանում հանքարդյունաբերական ու մետաղաձուլական խոշոր պետական ձեռնարկության ստեղծումը պայմանավորված է մեր երկրի տրնտեսությունում կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտությամբ: Հանքարդյունաբերության դեպքում առնչվում ենք նաև բնապահպանական շահերի հետ, որը դարձել է ժամանակակից պետությունների կարևորագույն գործառույթներից մեկը:

Նշված ճյուղում պետա-

կան ձեռնարկության ստեղծման պատճառների թվում կարելի է առանձնացնել հատկապես հետևյալները.

1) առկա է կապիտալի համակենտրոնացում պղնձի և հատկապես մոլիբդենի («Քաջարանի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ), ինչպես նաև ոսկու (Արարատի ոսկու արդյունահանման ընկերություն) արդյունահանման և վերամշակման մասով: Դրանից հետևում է, որ ոլորտը կարող է կախվածության մեջ ընկնել մեկ սեփականատիրոջից, ինչն իր հերթին նշանակում է, որ փաստացի մենաշնորհի ունեցող սեփականատիրոջ մոտեցումները որոշիչ են դառնում ճյուղի զարգացման հարցում: Իսկ այդ մոտեցումները հաճախ ուղղված են լինում ընդհանուր շահի դեմ: Իհարկե, գոյություն ունեն նաև այլ սեփականատերեր, որոնք իրենց հերթին, հաճախ, ունեն հակասական շահեր: Սովորաբար հումքային ճյուղերը գտնվում են տարբեր անդրազգային ընկերությունների ուշադրության կենտրոնում: Արդյունքում՝ Հայաստանը կարող է հայտնվել տարբեր անդրազգային ընկերությունների և պետությունների շահերի բախման կիզակետում: Հետևաբար, ոլորտում բարեփոխումների նպատակը ընդհանուր տեսքով կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. պետությանը ազատագրել «դրամական պարկերի» թելադրանքից, հեռու պահել

նրան օտարերկրյա ներդրողների և պետությունների հակապետություններից:

2) Լեռնամետալուրգիան Հայաստանի արդյունաբերության կարևորագույն ճյուղերից է, եթե չասենք, որ այն գերիշխող սեկտոր է: Ազգային տնտեսությունում ներկայումս այս սեկտորի զբաղեցրած դիրքը թույլ է տալիս նրան հանդես գալ թելադրողի դերում: Այն սեփականատերերը, որոնք իրենց ձեռքում պահում են այս ճյուղի ակտիվները, իրականում ամբողջ տնտեսության տերերն են: Ֆրանսիացի տնտեսագետ Ֆ. Պերուն դա կապում է հետևյալ հանգամանքների հետ.

ա) ցանկացած կոնկրետ տրնտեսություն կառուցվում է հիերարխիկ ուղղահայացով՝ հումքից մինչև պատրաստի արտադրանք,

բ) ցանկացած տնտեսությունում գոյություն ունեն բազիսային հումքային ճյուղեր, որոնց վիճակով էլ բնութագրվում են դրա աճի փուլերը,

գ) ցանկացած կամ գրեթե ցանկացած տնտեսական գործունեությունում արտադրվում են բազմաթիվ լրացուցիչ առարկաներ և ծառայություններ (օրինակ, լեռնամետալուրգիային ուղեկցող արտադրությունների և ծառայությունների շարքում հարկ է նշել գործունեության հետևյալ տեսակները. էլեկտրաէներգիայի արտադրություն, տրանսպորտային ծառայությունների մատուցում, վարկավորում և այլն)⁷:

3) Լեռնամետալուրգիայի ճյուղի ակտիվների ազգայնացումը և պետական ձեռնարկության

ստեղծումը թույլ կտան ռացիոնալ ձևով լուծել հետևյալ խնդիրները.

ա) իրականացնել այնպիսի կոմբինացիաներ, որոնք անհամատեղելի են կապիտալիստական շահութաբերության տրամաբանության հետ, քանի որ չափազանց բարձր ռիսկ ունեն մասնավոր ձեռնարկատիրոջ համար: Օրինակ, ի շահ ընդհանուր օգուտի, ճյուղի ներսում ներդրումների վերաբաշխումը կամ նոր պղնձածուլարանի կառուցումը պահանջում են աշխատանքների այնպիսի համադրում, որը հնարավոր չէ սպասել մասնավոր ֆիրմաների ինքնուրույն գործունեության արդյունքում:

բ) Լեռնամետալուրգիայի և տնտեսության առանձին ճյուղերի ձեռնարկությունների գործունեության համադրում (օրինակ, լեռնամետալուրգիա և էլեկտրաէներգետիկա, լեռնամետալուրգիա և երկաթուղային/ավտոմոբիլային տրանսպորտ), ռեսուրսների միջճյուղային վերաբաշխում, քանի որ մասնավոր տնտեսավարող սուբյեկտները ի վիճակի չեն դրանք անել: Հայաստանի հարավ, շրջաններից մետաղական հանքաքարը մինչև Արարատի երկաթուղային կայարան ավտոմոբիլային տրանսպորտի միջոցով փոխադրումը թուլացնում է ճյուղի մրցունակությունը, սակայն մասնավոր ընկերությունները ի վիճակի չեն լուծելու երկաթուղագծի շինարարության հարցը: Կա-

7. Барр Р., Политическая экономия: В 2 т. М., Международные отношения, 1995. Т. 1, 607 с.

րող է նաև լուրջ խնդիրներ առաջանալ այդ ընկերությունների և Հայկական երկաթուղիների ներկայիս կոնցեսիոների միջև: Այդ խնդրի լուծումը պետության ձեռքերում է:

Բազմաթիվ պետություններում այս ճյուղը ներկայացված է պետական ձեռնարկությունների միջոցով: Այս ճյուղի պետական ձեռնարկությունների միջոցով եվրոպական այնպիսի պետություններ, ինչպիսիք են Շվեդիան և Ֆինլանդիան կայացրել են իրենց տնտեսությունների համար կարևորագույն նշանակություն ունեցող մետաղամշակման քլաստերը: Այլ երկրներ նույնպես բախվել են այդպիսի հիմնախնդիրների հետ և դրանք հաջողությամբ հաղթահարել են «լեռնահանքային ճյուղի բարեփոխման համալիր ծրագրի» իրականացման միջոցով: Այդպիսի բարեփոխումների ծրագիրը պահանջում է տվյալ ճյուղում պետության դերի հիմնարար վերախմաստավորում: Անհրաժեշտ է «կարգավորողի և կոնցեսիաների պարզ տրամադրողի» դերից անցնել նոր «սեփականատեր-օպերատորի» դերի: Բոլորովին վերջերս Հարավ-Աֆրիկյան Հանրապետության (ՀԱՀ) կառավարությունը ստեղծեց պետական լեռնահանքարդյունահանող ընկերություն՝ African Exploration Mining and



Finance Corp (AEMFC), երկրում այդ ճյուղի վերահսկման նպատակով: «Պետությունը պետք է ակտիվորեն մասնակցի հանքարդյունահանող արդյունաբերությանը, որպեսզի երաշխավորի ազգային շահերի պաշտպանությունը»,- հայտարարեց ՀԱՀ նախագահ Ջեյքոբ Չուման⁸: Այս տարվա մարտ ամսին հանքերի ազգայնացման մասին հայտարարեց Աֆրիկայի առաջատար հանքարդյունահանող երկրներից մեկը՝ Չինթաբվեն: Այդ երկրի կառավարությունը որոշել է պետական սեփականությանը փոխանցել ճյուղի ձեռնարկությունների ակտիվների 51%-ը: Այդ կերպ Չինթաբվենի իշխանությունները մտադիր են ստեղծել բարեկեցության ազգային հիմնադրամ՝ զարգացման նախագծերի ֆինանսավորման համար: Չինթաբվեն հարուստ է այնպիսի օգտակար հանածոներով, ինչպիսիք են ադամանդը, ոսկին, պլատինը, ուրանը, քրոմը: Արդյունահանումը իրականացնում են խոշոր համաշխարհային ընկերությունները՝ հարավաֆրիկ-

յան Anglo American և Implants, անգլո-ավստրալիական Rio Tinto: Պաշտոնական տվյալներով, այս գործունեության տեսակի եկամուտները 2010 թ. կազմել են \$1,7 մլրդ., բայց պետությանը հասել է ընդամենը \$4 մլն.⁹:

Լեռնամետալուրգիական ճյուղի ազգայնացումը պետությանը պաշտպանում է դրան բնորոշ կոռուպցիոն ռիսկերից: «Էրեստ Էնդ Յանգ» միջազգային աուդիտորական ընկերության կողմից թողարկված «Խարդախությունը և կոռուպցիան լեռնարդյունահանող և մետալուրգիական ճյուղերում. Բիզնես էթիկայի համատեքստում – 2010» գեկույցի համաձայն ներկայումս կոռուպցիայի և խարդախության ռիսկի ավելի շատ ենթակա են լեռնահանքարդյունահանող ձեռնարկությունները, ինչպես նաև սև և գունավոր մետալուրգիայի ընկերությունները¹⁰: Գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետևանքները մեղմելու նպա-

8. В ЮАР создана государственная горнодобывающая компания, <http://metallworks.livejournal.com/382645.html>
9. Зимбабве объявила о национализации горнодобывающей промышленности, 10.03.2011, <http://afn.by/news/i/149364>
10. Ключевые факторы риска мошенничества и коррупции в горнодобывающей и металлургических отраслях, 14.09.10, <http://econcrime.ru/expert/5/>

Հանքարդյունաբերություն



տակով այս ճյուղերում տեղի ունեցավ վերահսկման ոլորտի ծախսերի կրճատում: Ըզնաժամից հետո հանքարդյունահանող ձեռնարկությունները և մետալուրգիական հողի նվազները սկսեցին ակտիվացնել իրենց ներդրումային և երկրաբանահետախուզական նախագծերը: Բանի որ լեռնահանքային և մետալուրգիական ճյուղերը առավել մեծ չափով են ենթակա պետական կարգավորման, հետախուզական աշխատանքների, ինչպես նաև սարքավորումների և հանքավայրի շահագործման համար անհրաժեշտ է ստանալ տարբեր պետական մարմինների թույլտրվություններ, ունենալ էկոլոգիական և սոցիալական հետևանքների գնահատականներ, ավելի շատ են հակված կոռուպցիոն ռիսկերի:

Մյուս կողմից, վերջին գործալ ֆինանսական ճգնաժամը և դրան հետևած տնտեսա-

կան անկումը մի շարք երկրների ուշադրությունը նորից սևեռեց ազգային տնտեսություններում պետական ձեռնարկությունների դերի բարձրացման խնդրի վրա: Չնայած այն տարածված կարծիքին, որ պետական ձեռնարկությունների գործունեության ցուցանիշները զիջում են մասնավոր ընկերությունների համապատասխան ցուցանիշներին, նույն «Էրնստ Էնդ Յանգ» կազմակերպության հետազոտությունները ցույց տվեցին, որ հետազոտված 24 երկրներից 12 հազար մասնակիցների գրեթե 40%-ը այն կարծիքին են, որ պետությունը ավելի լավ բաժնետեր է, որ պետական ձեռնարկությունները ապահովում են սպասարկման լավագույն մակարդակ մասնավորի համեմատությամբ¹¹: Այդպիսով հասարակության աչքում պետական ձեռնարկությունները լիարժեք ընդունակ են մրցակցել մասնավոր ընկերությունների հետ կամ նույնիսկ գերազանցել դրանց իրենց գործունեության

արդյունավետությամբ:

Պետական սեկտորի դերը ազգային տնտեսության գործունեության համար տնտեսական օպտիմումին մոտ պայմանների ստեղծմանը նպաստելն է: Պետական հատվածը կոչված է ապահովելու երկրի ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործման հնարավորություն և համախառն արտադրանքի ավելացում: Պետական սեկտորի ստեղծման ճանապարհով պետության ձեռքում հայտնվում է ազգային տնտեսության կառավարման չափազանց արդյունավետ գործիք: Խոշոր պետական ձեռնարկությունները թույլ են տալիս բարձրացնել մակրոկարգավորման միջոցառումների արդյունավետությունը:

Բայց ցանկացած դեպքում պետական հատվածի գործունեությունը հարկ է, որ լինի հաջորդական և համակարգված պետական տնտեսական քաղաքականության արդյունք: Մասնավորապես ֆրանսիական փորձը տարբեր ժամանակներում ցույց է տալիս, որ չկա տնտեսական քաղաքականություն առանց ընդհանուր քաղաքականության և չկա քաղաքականություն ընդհանրապես, եթե չկա պետություն:

11. Роль государственных предприятий в посткризисной экономике, 2010-11-02, http://www.goodvin.info/news/biznes/17239-rol_gosudarstvennyh_predpriyatij_v_postkrizisnoy_ekonomike.html

ԱԳՐԵՉԱՆԱԿԱՆ

ՌԱԶՄԱՐԿՅՈՒՆՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ

ՉԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Արծրուն ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախաբան

Ադրբեջանը Արցախյան հիմնախնդիրը լուծելու գործընթացում հստակորեն ընտել է ռազմականացման ճանապարհը՝ այդ գործում առաջ անցնելով նույնիսկ շատ մեծ երկրներից: Մեծ սեմոլերով ավելացնում է սղառազինությունը և ռազմական բյուջեն: 2004-2007 թթ. ընթացքում Ադրբեջանը միայն Ուկրաինայից ներկրել է 80.000 միավոր զենք¹: 2003-2008 թթ. ընթացքում Ադրբեջանի հիմնական մասնակարարները եղել են Ուկրաինան (364 մլն. դոլար), Ռուսաստանը (128 մլն.) և Վրաստանը (108 մլն.)²: Վերջին սվյալներով Ադրբեջանը ամենաշատ զենք գնում է Ուկրաինայից³: Խաղաղության խնդիրների ուսումնասիրության Սոկիոլմի միջազգային ինստիտուտի (SIPRI) սվյալների համաձայն՝

1998-2007 թթ. ընթացքում ադրբեջանական ռազմական ընդհանուր ծախսերն ավելացել են շուրջ 554 %-ով: 2011 թ. Ադրբեջանի ռազմական բյուջեն արդեն հասնում է 2 մլրդ. 511 մլն. մանաթ, որը հավասար է մոտ 2,8-3 մլրդ. դոլարի: Ադրբեջանական ռազմական բյուջեի ավելացումն ունի կոնկրետ հասցեականություն: Ստեղծվել է ռազմական արդյունաբերության նախարարություն: Տարբեր երկրների հետ կնքվում են ռազմական համագործակցության սասնյակ դաշմանագրեր: Ադրբեջանը թուրքական, իսրայելական և այլ երկրների ռազմարդյունաբերական ընկերությունների հետ կնքում է սղառազինությունների գնման, արդիականացման, համատեղ արտադրության դաշմանագրեր⁴:

Ադրբեջանական բանակի սղառազինության արդիականացման հարցում հետաքրքրական են սարա-

ստակ անօդաչու թռչող սարքերի (այսուհետ՝ ԱԹՍ) ձեռքբերումները: Ադրբեջանը ցանկանում է նաև արտադրել սովորական ու անգամ մարտական ԱԹՍ-ներ իսրայելական ընկերությունների հետ համատեղ: Գործարանն արդեն բացված է և կարելի է սղասել, որ փչ ժամանակ անց արդեն ԱԹՍ-ների ֆանակն ադրբեջանական բանակում կհասնի մինչև իսկ մի ֆանի հարյուրի: Բացի այդ, նման սարքերի ձեռքբերման համար դաշմանագիր է կնքվել թուրքական TAI (Turkish Aerospace Industries, Inc) ընկերության հետ: Ժամանակի հետ ծրագրվում է այդ նույն ավիագործարանում արտադրել ավստրիական «Diamond DA-42» փոքր ինֆնաթիռ, ինչը բնականաբար շատ հետաքրքիր է նաև ավիաարդյունաբերության զարգացման շեսանկյունից:

1. Holtom P., Ukrainian Exports of Small Arms and Light Weapons, 2004-2007, SIPRI Background Paper, October 2008, p. 2.
2. SIPRI Trend Indicator Values of arms imports to Armenia, Azerbaijan, Georgia, 1991-2008, Generated: 21 February 2010 - <http://www.sipri.org/contents/armstrad/output-types-TIV.html>
3. <http://news.am/arm/news/58336.html>
4. Լ. Հովսեփյան. Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմարդյունաբերությունը, Եր., 2010, էջ 144-150:



Istiqlal (IST-14,5 Anti-Material Rifle)

Ըստ ադրբեջանական Տեղեկատվության՝ Ադրբեջանի ռազմական արդյունաբերության նախարարությունը բանակի համար արդեն արձայնում է ավելի քան 400 անուն ռազմաստեխնիկական նշանակության արտադրատեսակ⁵: Դրանց մեջ են գրահամեմատներ, հրաձգային զենքեր, հանդերձանքի սարատեսակ դարազաններ և այլն: Չնայած ադրբեջանական կողմի ներկայացրած սվյալներին ու հավանություններին՝ նշենք, որ առաջիկայում ադրբեջանական ռազմարդյունաբերությունը չի կարող գրանցել լուրջ հաջողություններ, ինչը կաղված է մի քանի գիտատեխնիկական, արտադրական գործոնների հետ, որոնք Ադրբեջանում բացակայում են: Հետագայում փոփոխված հաջողություններն այդ ոլորտում կդառնան ավելի քան այն հանգամանակով, որ մի քանի երկրներ՝ Թուրքիա, Իսրայել, Պակիստան և այլն, կարող են մի քանի ռազմաստեխնիկական նախագծերում ցուցաբերել աջակցություն, իրականացնել համատեղ արտադրություն: Դեռևս Ադրբեջանը երկար ժամանակ ի վիճակի չի լինի իրականացնել ժամանակակից զենքերի ստեղծման ինֆունուրյն ծրագրեր և կախված է լինելու այդ երկրներից: Ներկայումս Ես տրություններ ակտիվորեն զբաղվում են ռազմարդ-

յունաբերության զարգացմամբ, որոնց ամենաչնչին հաջողություններն անգամ գրավում են Ադրբեջանին: Սակայն այստեղ հասուկ ուզում ենք ընտել, որ նման ոլորտի զարգացման համար ամենահզոր և փորձառու երկրները անգամ ծախսել են սասնյակ սարիներ և հսկայական միջոցներ: Ադրբեջանը չի ունեցել նման արտադրանքի ստեղծման կամ արտադրության մեծ փորձ և համադասասխան գիտատեխնիկական բազա: Ադրբեջանի ներկայիս Ես մասկարարներ իրենք նույնպես փառահեղ ավանդույթներով չեն կարող հղարձանալ, նրանք Ես դեղերում արձայնում են արդեն հնացած սղառագինություն: Այս դեղում առավել ևս բարձր մակարդակ դեռ երկար ժամանակ չի կարող ունենալ Ադրբեջանը: Մկանակ երկրների կողմից գովազդված, սակայն իրականում անորակ կամ լուրջ թերություններով սառաղող, զինատեսակների արտադրության օրինակները Ես են: Վերջին մի քանի սասնամյակներում զենք արտադրող երկրների ցանկը բավականին մեծացել է, սակայն դրա հետ մեկտեղ հիմնականում աճել են անորակ նմուշներն ու կրկնօրինակումները:

Գիտուկահար հրացան

Ադրբեջանը վերջին զենքերի ցուցահանդեսներին ակտիվորեն գովազդում է իր արտադրած զենքերը: Անդրաղառնանք ադրբեջանական ռազմարդյունաբերության արտադրանքի մի քանի նմուշներին: Նախ վերջին ժամանակներում բավականին գովազդվող ադրբեջանական «Istiqlal (IST-14,5 Anti-Material Rifle)» դիտուկահար հրացանի մասին:



McMillan TAC-50

Նված հրացանը դասկանում է մեծ սրամաչափի համանման զենքերի դասին: Այն կիրառում է խորհրդային ռուսական 14,5x114մմ փամփուռներ: Ըստ ադրբեջանական սվյալների՝ իրենց դիտուկահար հրացանը ունի հետևյալ մարտավարատեխնիկական բնութագիրը⁶.

Չենքի երկարությունը՝ 2015 մմ

Փողի երկարությունը՝ 1220 մմ
Քաշը՝ մոտ 20-29 կգ, վերջինը լրակազմով

Կրակի արդյունավետ հեռավորությունը՝ 3000 մ

Չենքը կիսաավտոմատ է, ինֆնալիցավորվող

Պահեստասուփը 3 կամ 10 փամփուռի համար

Ունի 8 անգամ մոտեցնող օղսիկական նշանոց

Առաջին հայացքից իհարկե վաս սվյալներ չեն, սակայն փորձենք վերլուծել դրանք: Աշխարհում ներկայումս Ես են սարածված մեծ սրամաչափի դիտուկահար հրացանները, սակայն սվյալ սրամաչափը անգամ Ռուսաստանում ընդունված չէ որդես դիտուկահար զենք: 14,5 մմ-անոց փամփուռները, ճիտ է, Ես հզոր են և այդ առումով զրահադաս տեխնիկայի դեմ կիրառելու համար բավականին հարմար, սակայն դրանք չունեն

5. Д. Мамедов. Что сулит двухмиллиардный военный бюджет // Зеркало, 26.04.2008.
6. http://az.apa.az/xeber_Azerbaijanin_%E2%80%99Istiqlal%E2%80%99D_snayperinin_yeni__165572.html;
<http://www.milaz.info/news.php?id=5009>



Mechem NTW-14,5

հասուկ դիտուկահարների համար նախատեսված գնդակներ կամ արկեր: Այսինքն՝ այս փամփուփուցների միակ առավելությունը հզորությունն է: Մոտ 60 գրամանոց արկը փողից դուրս գալով 1000 մ/վ արագությամբ ունի մոտ 30000 ջոուլ էներգիա⁷: Համեմատության համար նշենք, որ 12,7x108 մմ-անոց խոռոչային փամփուփուցները ունեն մոտ 50 գրամանոց արկ և մոտ 16000 ջոուլ էներգիա⁸: Այստեղ բնական հարց է առաջանում. եթե այս փամփուփուցները այդքան հզոր են, ապա ինչո՞ւ դրանցով դիտուկահար հրացաններ գրեթե չկան: Խնդիրը հենց նրանում է, որ հզոր փամփուփուցը նաև նշանակում է, որ դրանով կրակելը շատ դժվար է, իսկ որոշակի տարածությունից այն կողմ այդ արկերի ցրումը այնքան է մեծանում, որ դիտուկ կրակի մասին խոսելն ավելորդ է: Այդ հեռավորությունը կազմում է միջինը 1500 մ: Բնական հարց է առաջանում. եթե մարդուն 1500-2000 մ հեռավորության վրա նման զենքով հնարավոր չէ խոցել, ապա դիտուկահարի ստեղծման իմաստը ո՞րն է: Իհարկե, զենքի սվյալների մեջ գրված է, որ այն նախատեսված է նաև

գրահատյալ սեխնիկայի և այլ նշանակետերի խոցման համար ևս: Բնական է, որ նման հեռավորության վրա գրահատյալ մեքենան չափերով մեծ է և դիտչելու հավանականությունն էլ մեծանում է: Սակայն նման տրամաչափի փամփուփուցներով նման նշանակետ խոցելու համար բավական են նաև գնդացիները, որոնք անգամ ավելի մեծ հավանականությամբ կարող են խոցել այդ նույն մեքենաները՝ ելնելով իրենց արագաձգությունից և այլ հասկանիլներից: Այստեղ, իհարկե, հարց կարող է առաջանալ, որ նման գնդացիները ավելի մեծ և ծանր են, սակայն արի ու թեւ, որ ոչ: ԿՊՅ գնդացիը առանց մեծ մարտաշարի չունի մեծ ֆառ:

Ահա նաև այն դասառնները, թե ինչու նման տրամաչափի դիտուկահարները մեծ տարածում չունեն: Կան, իհարկե, նաև այլ դասառններ: Առաջին մեծ տրամաչափի դիտուկահարների կիրառությունը ցույց սկսեց, որ դրանց արդյունավետությունը այնքան մեծ չէ սովորական արկերով: Ճիշտ է, շատ երկրներ Ադրբեջանի նման շարունակում են սովորական գնդացիների համար նախատեսված արկերի փամփուփուցների համար դիտուկահարներ ստեղծել, անգամ կան էկզոտիկ 20 մմ-անոց մի ֆանի նմուշներ: Դրանք բոլորն էլ հզոր են, սակայն այստեղ ավարտվում է դրանց առավելությունը: Արևմուտքում ստեղծված հզոր դիտուկահարների համար գործածվում են հասուկ փամփուփուցներ: Դրանք կարող են լինել ավանդական տրամաչափի փամփուփուցների հասուկ տեսակներ կամ բացառիկ տրամաչափի փամփուփուցներ, որոնք, ճիշտ է, թանկ արժեն, սակայն իրենց գործում անփոխարինելի են: 1000-



M82

1500 մ հեռավորության վրա նույնքան հաջողությամբ կիրառվում են ավելի փոքր և հարմար 12,7 մմ-անոց ռուսական կամ ամերիկյան փամփուփուցները, հենց այդ դասառնով էլ կարիք չկա ստեղծելու ավելի հզոր դիտուկահարներ:

Ինչպես տեսանք վերը, ադրբեջանական այս զենքը ունի 20-29 կգ ֆառ, որը նման զենքերի համար չափազանց մեծ է: Աեխարիի ամենատարածված «M82», «McMillan TAC-50» և այլ դիտուկահարների ֆառը չի հասնում անգամ 15 կգ-ի⁹:

Ինչպես նշեցինք, նույն տրամաչափի այլ դիտուկահար հրացաններ ևս կան, դրանք գրեթե բոլորն էլ տարածված չեն, դրանցից է նաև մոդուլային կառուցվածք ունեցող հարավ-աֆրիկյան «Mechem NTW-14,5»-ը, որը կարող է նաև կիրառել 20 մմ-անոց փամփուփուցներ:

Կարելի է վստահորեն դիտել, որ ադրբեջանական դիտուկահարը կառուցվածքով և աեխասանի հիմնական սկզբունքով խոռոչային գնդացի և հարավ-աֆրիկյան այս համանման զենքի արագությունն է: Դրա-



Gepm1

7. Секулич М. Снайперская стрельба. Москва. 2003, стр. 181.
 8. Секулич М. Снайперская стрельба. Москва. 2003, стр. 180.
 9. <http://mcmfamily.com/mcmillan-rifles-tactical-tac-50.php>; <http://weapon.at.ua/load/242-1-0-386>



КПВ

նում կարելի է անգամ համոզվել նկարներից և չափերից: «КПВ»-ի երկարությունը կազմում է 2000 մմ, իսկ փողի երկարությունը 1346 մմ¹⁰:

«Mechem NTW-14,5»-ի ֆաբրիկայում, երկարությունը և փողի երկարությունը կազմում են նույնքան, որքան ադրբեջանական զենքի մեծ մասերը: Չարմանալի համընկնում է, չէ՞:

Իհարկե, մենք չնշեցինք այն մասին, որ ադրբեջանական ներկայացված սվալները կեղծիք են, նման զենքով 3000 մ հեռավորության վրա դիտուկ կրակ վարել հնարավոր չէ: Համեմատության համար նշենք, որ նույն սրամաշափի առաջին դիտուկահարը հունգարական «Gepard»-ը ունենալով անգամ ավելի երկար փող՝ 1630 մմ, ունի 1000-1500 մ արդյունավետ կրակի հեռավորություն¹¹: Չենքի հեռահարության առաջին գործոններից է երկար փողը, որը աղաժողովում է արկի մեծ արագություն, հեռաքար նաև հեռահարություն և դիտուկություն: «Gepard»-ի 400 մմ-ով ավելի երկար փողը աղաժողովում է կրկնակի թակաս հեռահարություն. սա

ուղղակի արսուրդ է, բացարձակությունը դարձ է, ադրբեջանական սվալները կեղծ են: Անգամ «Mechem NTW-14,5»-ի, որից արտադրված է ադրբեջանական հրացանը, սվալներում նշված չէ 3000 մ:

Վերը նշված հունգարական, հարավ-աֆրիկյան, խորվաթական և այլ դիտուկահարները ևս նույն դասառանգներով մեծ սարածում չեն գտնում: Այնուհետև որ ադրբեջանական դիտուկահարը դեռ շատ հեռու է լավը լինելուց և նմանը դառնալու հնարավորություններ գրեթե չունի:

Չրահադաս մեքենաներ

2010 թ. հաստատվեցին տեղեկություններն այն մասին, որ ադրբեջանական նորաստեղծ ռազմարդյունաբերության նախարարությունը հարավ-աֆրիկյան «Paramount Group» ընկերության հետ դեռ 2007 թ. աշխատանքներ է սանում երկու տեսակի զրահամեքենաների արտադրության ուղղությամբ: Այդ երկու մեքենաներն էին «Marauder APC»-ն և «Matador»-ը: Վերջինս ստեղծվել էր հարավ-աֆրիկյան ընկերության և հորդանանյան «Middle East Defence Systems (MDS)» ընկերության հետ համատեղ¹²: Այս մեքենաների արտադրությունը Ադրբեջանում կազմակերպելը բխում էր երկկողմ շահերից: Երկու մեքենաները շատ ընդհանրություններ ունեն, նախ՝ նրանց շարժիչները նույնն են, ընթացալիս մասում ևս կան նույն հիմքը կազմող բաղկամասեր: Մեքենաների արտադրության և մասնալարարման մասին տարբեր տեղեկություններ կան: Նախ մի փոքր ֆունկցիոնալ առաջվել էր, որի հիմքի վրա էլ հավանաբար կատարվել են ուսում-



Тигр

նասիրությունները և արտադրությունը: 2009թ. «Paramount Group»-ը առաջ էր 10 միավոր «Marauder»: Նույն տարում Հարավ-աֆրիկյան Հանրապետությունից ընդհանուր ռազմական մասնալարարմանը անցնում էին 22 մլն. դոլարից¹³: Ներկայումս արտադրված մեքենաների ֆունկցիոնալ մասին տեղեկությունները սահմանափակ են, հայտնի է միայն, որ դրանց արտադրման հնարավորությունները այնքան էլ մեծ չեն: Ադրբեջանական բանակում կան նաև քուրդական արտադրության «Otokar Cobra» զրահամեքենաներ, որոնք բավականին սարածված են աշխարհում¹⁴: Դրանց ֆունկցիոնալ և սույուգ հայտնի չէ:

Իհարկե նշված հարավ-աֆրիկյան ընկերությունը բավական հայտնի է սղառագիտությունների արտադրության ոլորտում: Նշված մեքենաներն էլ չնայած սարածված չեն, սակայն կրում են գերմանական շարժիչներ և օժտված են հակաակնային հասկանիչներով: Մասնավորապես կարող են խոսել այս մեքենաների որակի մասին: Գրեթե բարձր հեղինակու-

10. Федосеев С. Самый мощный серийный пулемёт. № 44 (360) за 10 ноября 2010.
 11. <http://www.sero.hu/spec/product.htm>
 12. <http://www.deagel.com/>
 13. <http://news.am/arm/news/57162.html>
 14. <http://www.vesti.az/news.php?id=70553>



Iveco LMV M65

թյուն արդեն ունի դեռևս 1997 թ. արտադրվող թուրքական մեքենան, որը մասնակցել է նաև 2008 թ. ռուս-վրացական դաշտերում:

Ներկայումս աշխարհում նման մեքենաների արտադրությունը և սեսականին բավականին մեծացել է, սակայն դրանց առաջին հայացքից լավ բնութագրերի մեջ դժվար է գտնել ամենաբացառիկները: ԱՄՆ-ի բանակում նման մեքենայի համար մրցույթ էին հայտարարել, որի դաշտերը շատ խիստ էին: Ռուսաստանում մինչև օրս վերջնական որոշում չեն կարողանում կայացնել այս հարցի շուրջ՝ գնել սեփական, թե՛ արտասահմանյան մեքենաներ:

Նշենք, որ մեծ աղմուկ բարձրացավ սեփական արտադրության «Тигр» զրահամեքենայի և իտալական «Iveco LMV M65»-ի միջև ընթացող մրցավազքի համար¹⁵:

Ահա թե ինչու չնայած նրան, որ շատ երկրներ, այդ թվում նաև Ադրբեյջանը և Թուրքիան, արտադրում են նման մեքենաներ, չի նշանակում, թե դրանք որակյալ

են: Այսօր աշխարհում ստեղծվում են նոր սեսակի զրահամեքենաներ, որոնք ունեն մոդուլային կառուցվածք, արագ կարող են ձևափոխվել և սղառագինվել տարբեր զենքերով և այլն: Այս առումով շատ երկրներ անգամ չեն շատում ձեռք բերել նոր զրահամեքենաներ, քանի որ դեռ շատ անհայտ հարցեր կան: Նման երկրները չեն գնում նաև հին մեքենաները, քանի որ դրանք արդեն անցած ժամանակներին են համադասարանում: Վերջերս մամուլում հայտնվել են տեղեկություններ այն մասին, որ Ուկրաինան զրահամեքենաների արտադրության առաջատարներից մեկն է: Ուկրաինան հիմնականում վաճառում է «БТР-3 Гардиан» և «БТР-4 Буцезал» զրահամեքենաներ: Նշված ուկրաինական զրահամեքենաները ստեղծվել են խորհրդային հայտնի զրահամեքենաների հիմքի վրա, դրանք հիմնականում առավելում են այնպիսի երկրներ, որոնք չեն զինվում գերժամանակակից սղառագինությամբ: Նման հին մեքենաներ է առավելում նաև ՌԴ-ն, որը ևս նման զրահամեքենաների առավելում առաջատար Ֆինլանդիան է, որը մասկարաբար է ժամանակակից մոդուլային «Patria AMV» (Rosomak) զրահամեքենան:

Ֆիննական մեքենան ժամանակակից է, շատ հասկանիչներով տարբերվում է հասկանիչ ռուսական և ուկրաինական այն մեքենաներից որոնց հետ մրցակցում է¹⁶: Չարմանակին այն է, որ Հարավ-աֆրիկյան



Patria AMV (Rosomak)

Հանրապետությունը ևս գնել է ֆիննական այս մեքենաներից, ընդ որում բավականին մեծ քանակությամբ՝ ավելի քան 250 միավոր¹⁸: Բնականաբար սա նշանակում է, որ հարավ-աֆրիկյան սեփական զրահամեքենաները որքան էլ լավը լինեն, միևնույն է, զիջում են աշխարհի ամենաառաջատարներին:

Հրթիռներ

Դեռ 2009 թ. թուրքական «Roketsan» և ադրբեյջանական «Iqlim» ընկերությունների միջև համագործակցության դաշմանագիր է կնքվել: Ըստ դաշմանագրի նախատեսվում է համագործակցության կայանների 107 և 122 սմ-անոց հրթիռների համատեղ արտադրություն¹⁹:

Թուրքական վերը նշված ընկերությունը վաղուց արդեն մասնագիտացել է արևմտյան և խորհրդային այս սրամաշափերի չդեկավարվող հրթիռների գործում²⁰: Նշված ընկերությունը ստեղծվել է 1988 թ. և հիմնականում հրթիռների գործում համագործակցում է 140 արտասահմանյան ընկերությունների հետ:

15. <http://www.rg.ru/>

16. <http://www.rian.ru/defense-safety/20110505/371191843.html>; <http://www.armstrade.org/>; <http://www.aze.az/news-bolshe-vsego-orujiya-57442.html>

17. <http://www.army-technology.com/contractors/armoured/patria-vehicles2/>

18. <http://www.defenceweb.co.za/index.php?option=com-content&task=view&id=2663&Itemid=362>

19. <http://www.aze.az/news-azerbayjan-i-turciya-44651.html>

20. Այս մասին մանրամասն տես Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը: Եր., 2010, էջ 82-90:



TR-107

Ըստ այս տրայմանագրի՝ հրթիռների որոշ բաղկամասեր արդեն դասրասի կառավարման Թուրքիայից, մնացածը կարսադրվի սեղում համասեղ: Ըստ հայկական սրվյալների՝ այս ընկերությունը նրբված հրթիռների հեռահարությունը ավելացրել է: «TR-107» և «TRB-107» հրթիռների հեռահարությունը հասցվել է 11 կմ, իսկ «TRB-122» հրթիռները արդեն ունեն 40 կմ հեռահարություն, կան նաև դակաս հեռահարության հրթիռներ: 107 և 122 մմ-անոց հրթիռների համար կարսադրվեն նաև համադասասխան արձակման կայաններ, այդ մասին տրայմանագիրը կնքվել է 2011 թ.²¹:

Թուրքական ընկերությունը դեռ վաղուց խորհրդային «ԵՄ-21» մեքենայի բազում կոնստրուկցիայից մեկի հիման վրա ստեղծել էր «T-122 Sakarya» համազարկային կրակի համակարգը: 107 մմ-անոց նման առանձին համալիր Թուրքիայում չի ստեղծվել, սա Արևմուտքում 1950-ականներից լավ սարածված սրամաշափ է, որի համար ստեղծվել էին բազում արձակման կայաններ: Ժամանակի հետ սակայն Արևմուտքում սլյալ և անգամ մինչև 150-200 մմ-անոց մնացյալ սրամաշափերը հա-

մարվեցին փոքր ու հնացած: Ներկայումս եվրոպական բանակներից շատերում սլյալ սրամաշափի հրթիռներ չեն կիրառվում: Նման հրթիռներ կիրառող համալիրներ ներկայումս կան չինական բանակում: Լայն սարածում են գտել «63» և «81» անուանները կրող համալիրները: Նման սրամաշափերի հրթիռները հասկադես շատ են կիրառվում արևելյան հետամնաց բանակներում ու նաև ահաբեկչական կազմակերպությունների կողմից:

Դեռ 1980-ականներին ամբողջ աշխարհում ողջ արությանը դրվեց մինչև 150-200 մմ-անոց չղեկավարվող հրթիռների կիրառության արդյունավետության հարցը: Փոքր սրամաշափի հրթիռների ցումը չափազանց մեծ է: Դրանց հեռահարության ավելացումը ոչ այնքան դրական, որքան բացասական արդյունք է սալիս, քանի որ հեռահարության ավելացման հետ մեկտեղ ավելանում է նաև դրանց շեղումը նշանակեցից: Այդ ֆննարկումների և ուսումնասիրությունների արդյունքում էլ շատ երկրներ հրաժարվեցին մինչև 160 մմ-անոց հրթիռներից, իսկ մեծ սրամաշափերի հրթիռները հիմնականում դարձան են ղեկավարվող: ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին հանրադեպությունների և հասկադես ՌԴ-ի սղառազինության մեջ մնացել էին մեծ քանակությամբ 122 մմ-անոց «ԵՄ-21» կայաններ ու հասկադես դրանց համար հրթիռներ: Դրանք մեծ քանակով կիրառվեցին նաև 1990-ականների սեղային դասերազմներում: Սակայն ներկայումս հսակորեն նկատվում է դրանցից հրաժարվելու միտում: ՌԴ-ում ևս մեծ քանակությամբ նման համալիրներ հանվում են սղառազինությունից, իսկ դրանց փոխարինելու են զալիս նոր բազմանդասակ



ԵՄ-21

համալիրներ, որոնք կարող են կիրառել նաև այլ, հասկադես ավելի մեծ սրամաշափի հրթիռներ: Կա նաև նման հրթիռների ռազմական սեսանկյունից կիրառության համար ոչ արդյունավետ, սակայն ոմանց համար շատ կարևոր ոլորտ: Նման հրթիռներով մասսայական կրակ է բացվում մեծ բնակավայրերի վրա, քանի որ շեղումները այստեղ արդեն էական չեն: Իհարկե, թուրքերը երբեք չեն մտադրվել այս հարցով, նրանք հաճույքով էին նման հրթիռներով Շուշիից հրետակոծում Ասեփանակերը և մյուս հայկական բնակավայրերը: Ահա թե ինչու են նրանք շատ արագությամբ նման հրթիռների մեծ քանակ: Նման հանգամանքներում թուրքական և ադրբեջանական ընկերությունների կողմից արդեն հնացած կամ լավագույն դեղում հնացող, սակայն իրենց գործելաոճին շատ հարազատ զինատեսակների արտադրության հիմնումը ներկայացվում է որդես նոր ու ցնցող ձեռքբերում:

Այլ նախագծեր

Ադրբեջանական ռազմարդյունաբերական համալիրը, բնականաբար, նախաձեռնելով այնպիսի բացառիկ նախագծեր, ինչպիսիք են հրթիռները,

21. <http://vesti.az/news.php?id=69818>



T-122 Sakarya

գրահամեմեմաները և դիմադրական հարները, չէր կարող անսեսել այնպիսի զենքերը, ինչպիսիք են սովորական ասրճանակները, ինֆնաձիգները, հրասայլերը և այլն: Մամուլում կան հիմնականում աղոտ տեղեկություններ այն մասին, որ ադրբեջանական ինժեներների կողմից ստեղծվել և գործարաններում արտադրվում են «Շիմեկ» կոչված գրոհային հրացանը, «Խազրի» ինֆնաձիգը, «Չաֆար» և «Ինամ» ասրճանակը²²: Ի դեպ, գրոհային հրացանը և ավսոմասը նույնն են, ուղղակի սարքեր կերպ են կոչվում Արևմուտքում և Արևելքում:

Հիմնականում թուրքական ընկերությունները ադրբեջանական ռազմաարդյունաբերական համալիրը ներառում են ավելի ու ավելի մեծ նախագծերի մեջ: Դա բնական է, մեծ եղբայրը ղեկավարում է փոքր եղբորը օգնելով: Թուրքական կողմը առաջարկել է միանալ այնպիսի նախագծերի,

ինչպիսիք են թուրքական «Altay» հրասայլը, ուղղաթիռների և այլ սարքավորումների արտադրության գործում²³:

Վերջաբան

Աշխարհում օրեօր ավելանում են արևելյան այն երկրները, որոնք զարգացնում են ռազմաարդյունաբերական համալիրը, արտադրում են որոշակի զինատեսակներ և հաջողությամբ դրանք վաճառում սարքեր երկրների: Առայժմ հիմնականում թուրքական, համաաշխարհային շուկայում արդեն դիրքերը որոշակիորեն ամրադնդած, ռազմաարդյունաբերական համալիրը իր հետևից սանում է նորաստեղծ ադրբեջանական գերատեսչությունը: Թուրքական ռազմաարդյունաբերական համալիրը ներկայումս նախանձելի արդյունավետ է գրանցում արտադրության սարեկան աճի ծավալներով: 2010 թ. թուրքական ընկերությունները բավարարել են թուրքական բանակի լուծարման 52 % տոկոսը²⁴: Սակայն սա դեռ ամբողջը չէ, այդ ընկերությունները միասին արտադրել են 630 մլն. դոլարի սպառազինություն և ռազմական սարքավորումներ: 2011 թ. վերջին նախատեսվում է կրկնապատկել արտահանման ծավալները՝ հասցնելով 1,5 մլրդ. դոլարի²⁵: Բավականին հետաքրքիր է թուրքական այդ ընկերությունների, ինչպես նաև դրանց «դուսր ձեռնարկություն» Ադրբեջանի ռազմաարդյունաբերական համալիրի առաջնությունների աշխարհագրությունը: Պարսկական ծոցի երկրներ, աֆ-

րիկյան որոշ երկրներ, Թուրքմենիա, Ուզբեկստան, Պակիստան, Ադրբեջան, Վրաստան և այլն: Մրանք հիմնականում մուսուլմանական այն երկրներն են, որոնցում մեծ ազդեցություն ու կադրեր ունեն ահաբեկչական կազմակերպությունները: Այս երկրներում են ստեղծվում ահաբեկչական բջիջները, դրամական հոսքերը, այստեղ են նրանք ձեռք բերում նորանոր սպառազինություններ և նոր տեխնոլոգիաներ:

Իհարկե, ներկայումս թուրքական ու հասկադես ադրբեջանական ընկերությունները հիմնականում զբաղված են մեծամասամբ հնացած զինատեսակների կլոնավորմամբ, սակայն այս ոլորտում սևական և հետևողական աշխատանք կարող է որոշակի հաջողություններ ապահովել փոքր ոլորտներում: Դրանցից կարող են համարվել հրաձգային զենքերի որոշ տեսակներ, որոշ սարքավորումներ և հանդերձանքի դարազաններ:



22. <http://news.life.az/2009/12/16/javer-dzhamalov-v-jetom-godu-azerbajdzhan-nachal-serijnyjj-vypusk-neskolikh-obrazcov-oruzhija.html>

23. <http://ru.apa.az/print.php?id=123131>

24. Savunma sanayinde hedefler a l d , <http://ekonomi.milliyet.com.tr/savunma-sanayinde-hedefler-asildi/ekonomi/ekonomideta/26.04.2011/1382547/default.htm>

25. Turkish defense industry grows by 19 percent in 2010, <http://www.hurriyetdailynews.com/n.php?n=turkish-defense-industry-grows-by-19-percent-in-2010-2011-05-03>

Իսրայելական գործոնն Աբխազիայում

Կարեն Վերանյան



Նոր միսումներ Իսրայել-Հարավային Կովկաս հարաբերություններում

Վերջին տարիներին Իսրայելի ռազմավարությունում որոշակի փոփոխություններ են նկատվում հարավկովկասյան ուղղությամբ: Վերլուծաբանների զգալի հատվածը դա պայմանավորում է 2008 թ. վրաց-հարավօսական պատերազմով: Ետպատերազմյան շրջանում Վաշինգտոնը որոշակիորեն սառեցրեց Վրաստանի հետ հարաբերությունները՝ փորձելով չզնայ առճակատման Կրեմլի հետ: Ավելին, Վաշինգտոնում Վրաստանի նախագահ Մ. Սահակաշվիլուն դադարել են ընդունել նախկին բարձր մակարդակով: Անհերքելի է, որ ռազմական գործողություններից հետո զգալիորեն նվազեց Վրաստանի միջազգային կշիռը, ինչը նաև անուղղակի ազդեցություն ունեցավ այդ թվում և Իսրայել-Վրաստան համագործակցության վրա: Այս զարգացումների համատեքստում Իսրայելի ղեկավարությունը վերանայեց հարավկովկասյան ռազմավարությունը՝ Վրաստանի հետ համագործակցությունը հասցնելով բավական ցածր մակարդակի: Զգալիորեն կրճատվեցին իսրայելցի բարձրաստիճան պաշտոնյաների այցերը Թբիլիսի, սառեցվեց երկկողմ ռազմական համագործակցությունը: 2010 թ. օգոստոսին Իսրայելի արտգործնախարար Ավիգոր Լիբերմանը Վրաստանի տարածաշրջանային զարգացման ու ենթակառուցվածքների նախարար Ռամազ Նիկոլայիշվիլիի հետ հանդիպմանը հայտարարեց, որ «Մերձավոր Արևելքում և Կովկասում տիրող զգայուն իրադրության առկայության պայմաններում ռազմական համա-

գործակցության հարցը դրված չէ երկկողմ հարաբերությունների օրակարգում»:

Վրաստանի հետ համագործակցության թուլացմանը զուգահեռ իսրայելական կողմը ջերմացրեց համագործակցությունը Բաքվի ու Մոսկվայի հետ: Իսրայելի հարավկովկասյան ռազմավարության փոփոխության մասին են խոսում նաև Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսի ու արտգործնախարար Լիբերմանի այցերը Բաքու: Վարչապետության երկու տարվա ընթացքում Իսրայելի վարչապետ Բենիամին Նեթանյահուն (նա ստանձնեց վարչապետի պարտականությունները 2009 թ. մարտի 31-ից) հասցրել է արդեն 3 անգամ այցելել ՌԴ:

Ռուսական կողմն իր հերթին մեծապես շահագրգռված է Իսրայել-Վրաստան համագործակցության սառեցման հարցում: Այս առումով կարևորվում է Աբխազիայի հետ իսրայելական կապերի հաստատման խնդիրը, որն ազդարարեց որակապես նոր գործընթացի մեկնարկը Իսրայել-Հարավային Կովկաս հարաբերություններում: Դա կնպաստի Աբխազիայի միջազգային կշռի ընդլայնմանը, հետևաբար և տարածաշրջանում

The breakaway republics of Abkhazia, South Ossetia and Nagorno-Karabakh within the Caucasus region (after August 2008)



ռուսական դիրքերի ամրապնդմանը: Մյուս կողմից, Աբխազիայում իսրայելական գործոնի ակտիվացումը կապված է ինչպես իրանա-աբխազական կապերի զարգացմամբ, ինչն առավել նկատելի է հատկապես 2009-2010 թթ. կտրրվածքով, այնպես էլ այս ուղղությամբ ռուս-թուրքական շահերի մրցակցությամբ:

Սառեցում Իսրայել-Վրաստան հարաբերություններում

Ինչպես նկատում են որոշ վերլուծաբաններ, հարավկովկասյան ուղղությամբ իսրայելական կողմի նախկին դիրքորոշման փոխակերպումը, այդ թվում և Աբխազիայում իսրայելական գործոնի ակտիվացումը, ուղղակի հետևանք են Իսրայել-Վրաստան երկկողմ հարաբերությունների սառեցման: Խոսքը վերաբերում է 2010 թ. հոկտեմբերին Բաթումում իսրայելցի խոշոր գործարարներ Ռոն Ֆուքսի (էլյատում Թուրքիայի պատվավոր հյուպատոս) ու Nirnetco (Overseas) ընկերության նախագահ Ջեյն Ֆրենկելի՝ Վրաստանի ֆինանսների փոխնախարար Ավթանդիլ Խարայիձեի կաշառելու փորձի մեղադրանքով ձերբակալությանը: 2011 թ. ապրիլի 1-ին Թբիլիսիի դատարանի որոշմամբ, իսրայելցի գործարարները դատապարտվեցին համապատասխանաբար 7 և 6,5 տարվա ազատազրկման, ինչպես և պարտավորվեցին վճարել շուրջ կես միլիոն ամերիկյան դոլարի տուգանք: Միջադեպի նախապատմությունը վերագրվում է Չվիադ Գամ-

սախուրդիայի նախագահության շրջանին, երբ Ֆուքսին ու Ֆրենկելին 1991 թ. հաջողվել էր ձեռք բերել Վրաստանի տարածքում գործող խողովակաշարերի կառավարման ու առկա բոլոր ածխաջրածնային հանքավայրերի վերամշակման բացառիկ իրավունքի վերաբերյալ անժամկետ համաձայնագիր: Համաձայնագրի հետ կապված լուրջ խնդիրներ առաջացան արդեն նախագահ Սահակաշվիլու նախաձեռնած հակակոռուպցիոն քաղաքականության արդյունքում: Նշենք, որ 2010 թ. հոկտեմբերին իսրայելցի գործարարների ձերբակալությունից 7 ամիս առաջ գործը քննվեց Ներդրումային վեճերի լուծման միջազգային կենտրոնում, որտեղ վեճը հարթվեց ի վնաս Վրաստանի կառավարության. վերջինս պարտավորվեց գործարարներին վճարել շուրջ \$100 մլն.: Պաշտոնական Թբիլիսին, սակայն, բողոքարկեց այդ որոշումը: Իսրայելցի գործարարները խոստացան \$7 մլն. կաշառք տալ Վրաստանի ֆինանսների փոխնախարար Խարայիձեին՝ ձախուղելու Վրաստանի կառավարության կողմից որոշման բողոքարկումը, ինչը և բացահայտվեց տեղադրված տեսախցիկի միջոցով: 2010 թ. հոկտեմբերին նրանց ձերբակալությունից անմիջապես հետո Վրաստանի ՆԳՆ-ն հրապարակեց Ֆուքսի և Ֆրենկելի հետ Խարայիձեի հանդիպման տեսագրությունը, որը կայացել էր մի քանի շաբաթ առաջ ստամբուլյան հյուրանոցներից մեկում:

Ֆուքսի ու Ֆրենկելի ազատ արձակման հարցով Վրաստանի ղեկավարությանն էին դիմել Իսրայելի նախագահ Շիմոն Պերեսն ու արտգործնախարար Լիբերմանը, ինչը որևէ դրական արդյունք այդպես էլ չտվեց: Չպետք է մոռանալ, որ Ռոն Ֆուքսը վաղեմի կապեր է պահպանում Շիմոն Պերեսի հետ: Վրացի գործընկեր Գրիգոլ Վաշաձեին Լիբերմանի հղած ուղերձում ասվում է. «Այն, որ Վրաստանի իշխանությունները Ֆուքսին և Ֆրենկելին հրավիրել են երկիր, հետո ձերբակալել, կարող է լուրջ խոչընդոտ հանդիսանալ երկու պետությունների հարաբերությունների զարգացման համար: Սա կփլուզի երկու երկրների միջև բոլոր տնտեսական կապերը, որոնք վերջին տարիներին այդքան արագ զարգանում էին»: Իր հյուպատոսի ձերբակալման առթիվ դժգոհություն է արտահայտել նաև Թուրքիան:

Ի պատասխան Վրաստանի իշխանությունների գործողությունների, 2011 թ. սկզբներին Իսրա-



յելի արդյունաբերողների ասոցիացիայի նախագահ Շրագա Բրոշը կոչ արեց երկրի կառավարությանը կրճատել Վրաստանի հետ համագործակցության ծավալները և իսրայելցի գործարարների այցերը: Իսկ ս.թ. մարտին Քնեսեթի նախագահ Ռեուվեն Ռիվլինը խորհուրդ տվեց իր վրացի գործընկերոջը՝ Դավիթ Բակրաձեին, չեղյալ հայտարարել Իսրայել ծրագրված այցելությունը: Իսրայելի գրոսաշրջության նախարար Ստաս Միսեժնիկովն իր հերթին հայտարարեց, որ մտադիր չէ հանդիպել Վրաստանի տնտեսության ու կայուն զարգացման նախարար Վերոնիկա Կոբալիայի հետ:

Ֆուքսի ու Ֆրենկելի ձեռքակալությունից զատ վրաց-իսրայելական հարաբերությունների վրա բացասաբար անդրադարձավ նաև 2010 թ. օգոստոսին Թբիլիսիի կողմից Վրաստանում գործող իսրայելական Ashtrom International շինարարական ընկերությունը երկրից դուրս մղելու փաստը: Ըստ ոչ պաշտոնական տվյալների, Կովկասում այդ ընկերության գործունեության հետ է առընչվում Իսրայելի իշխող կոալիցիայի խոշոր դեմքերից մեկը: Իսկ 2010 թ. նոյեմբերին Թբիլիսիի դատարանը անշարժ գույքի վաճառքից նախատեսված հարկերը չվճարելու համար մեղադրանք ներկայացրեց իսրայելցի միլիարդատեր Աբրահամ Նանիկաշվիլիի ու Քնեսեթի նախկին պատգամավոր Էֆրայիմ Գուրի նկատմամբ: Վրաց-իսրայելական հարաբերություններն էլ ավելի լարվեցին, երբ ս.թ. մարտին Իսրայելում հյուրընկալվեց Աբխազիայի ղեկավարության կողմից ուղարկված պատվիրակությունը: Ավելին, աբխազական պատվիրակության այցն իրականացվում

էր Իսրայելի կողմից Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Բակրաձեի և տնտեսության նախարար Վերոնիկա Կոբալիայի այցերի մերժման ֆոնի վրա:

Իսրայելական կողմի առաջին օփումները Աբխազիայի հետ

Աբխազիայի իշխանությունները, ձգտելով ընդլայնել երկրի միջազգային վարկը, իսրայելական կողմի հետ կապերի հաստատման մտադրության մասին ուղերձներ էին ուղարկում իսրայելական կողմին դեռ Կրեմլի կողմից այդ հանրապետության անկախության ճանաչումից 4 տարի առաջ: 2004 թ. հուլիսի վերջերին համագործակցության նպատակով Աբխազիա այցելեց Վրաստանում Իսրայելի դեսպան Ռիվկա Քոնենի գլխավորած պատվիրակությունը, որի կազմում էին Վրաստանում ու ՀՀ-ում «Սոխնուտ» գործակալության ներկայացուցչության ղեկավար Դոլ Պիկուլինը, Հարավային Կովկասում ամերիկա-իրեական «Ջոյնթ» կազմակերպության ղեկավար Մեիր Ջիգովը: Հանդիպման ընթացքում Աբխազիայի նախկին փոխնախագահ Վալերի Արշբան հույս հայտնեց, որ «Իսրայելը կլինի Աբխազիայի անկախությունը ճանաչող առաջին երկրներից մեկը»: Իսկ 2008 թ. օգոստոսին՝ վրաց-հարավօսական պատերազմից հետո, Աբխազիայի՝ այդ օրերի արտգործնախարար Սերգեյ Շամբան հայտարարեց, որ «Աբխազիայի համար Իսրայելը հանդիսանում է հեռանկարային ուղղություններից մեկը»:





Կողմերի միջև շփումները հաճախակիացան 2010 թ. ընթացքում: Նախորդ տարում ոչ մեկ անգամ Արխագիա այցելեց իսրայելական նախաձեռնող մի խումբ՝ գործարարներ Էլիա Յուդայի ու Մարկ Բուրլեի գլխավորությամբ: Այցերի ընթացքում նրանք հանդիպումներ ունեցան վարչապետ Ս. Շամրայի և կառավարության աշխատակազմի ղեկավար Դաուր Բովեի հետ: Նախաձեռնող խումբը ներկայացրել էր առաջարկություններ՝ զարգացնելու Արխագիայում գործարարության, բժշկության և գյուղատնտեսության ոլորտները: Էլիա Յուդայի և Մարկ Բուրլեի հերթական այցն իրականացվեց 2010 թ. դեկտեմբերի 23-ին: Գործարարներին ուղեկցում էին բժշկության ոլորտի մասնագետներ, որոնք մեծ փորձ ունեին ողջ աշխարհում ախտորոշիչ կենտրոնների հիմնադրման հարցում: Չեռք բերված պայմանավորվածությունների արդյունքում նախատեսվում է Արխագիա ներկրել բժշկության արդիական տեխնոլոգիաներ ու սարքավորումներ: Նախորդ տարվա հուլիսի 18-ին Իսրայելում Քնեսեթի պատգամավորների ու գործարարների հետ հանդիպումներ

ունեցավ այս անգամ Արխագիայի կառավարության առաջին պատվիրակությունը՝ փոխվարչապետ Դաուր Թարբայի գլխավորությամբ: Բանակցությունների արդյունքում իսրայելցի գործարարները շահագրգռվածություն հայտնեցին Արխագիայում ներդրումների իրականացման և գործարարության զարգացման հարցերում:

Կողմերի միջև համագործակցությունն ակտիվացավ այս տարվա առաջին կեսերից: Մ.թ. ապրիլի 14-ին իսրայելական հեղինակավոր Global CST ընկերության պատվիրակությունը, որը մասնագիտացած է պաշտպանության ու անվտանգության ոլորտներում, այցելեց Արխագիա: Ընկերությունը մտադիր է առաջիկայում համագործակցել Արխագիայի հետ ինչպես պաշտպանական, այնպես էլ սոցիալ-տնտեսական բնագավառներում: Բանակցություններից հետո Global CST ընկերության ներկայացուցիչները հայտարարեցին, որ պայմանավորվածություն է ձեռք բերվել Արխագիա մատակարարել ոչ հարձակողական տեսակի պաշտպանական տեխնոլոգիաներ, անվտանգության ապահովման համար նախատեսված սարքավորումներ, բժշկության նորարարական տեխնոլոգիաներ: Բանակցությունների արդյունքում ընկերությունը մտադրություն է հայտնել նաև ներդրումներ իրականացնել Արխագիայի գյուղատնտեսության, զբոսաշրջության, օգտակար հանածոների արդյունահանման ոլորտներում:

Նպատակահարմար ենք համարում երկու խոսքով անդրադառնալ նաև Global CST ընկերությանը՝ շեշտադրելու վերջինիս Արխագիա կատարած այցի ու կայացած բանակցությունների կարևորությունը: Իսրայելական ընկերությունը գլխավորում էին Իսրայելի պաշտպանության բանակի նախկին բարձրաստիճան սպաները: Ընկերության ղեկավար՝ Իսրայելի պաշտպանության բանակի Գլխավոր շտաբի Օպերատիվ վարչության նախկին պետ Իսրայել Չիվը սերտ կապեր է պահպանում Իսրայելի իշխանական վերնախավի հետ: Ընկերության գործունեությունն ուղղված է այդ թվում և ռազմական տեխնոլոգիաների ու ռազմատեխնիկայի մատակարարումների ապահովմանը, ինչպես նաև հատուկ զորամիավորումների պատրաստմանը (օրինակ՝ Գվինեայում և Կոլումբիայում): Որոշ հաղորդագրությունների համաձայն, իսրայելական կողմը կարող է համա-



ձայնել արխազական կողմին հանձնել այդ թվում և անօդաչու թռչող ինքնաթիռներ: Սուխումում կայացած բանակցություններում իսրայելական կողմը ներկայացնում էին Իսրայել Չիվն ու Բ. Նեթանյահուի նախկին ռազմական քարտուղար Մեիր Բլիֆին (ընկերության գլխավոր տնօրեն): Նախագահ Մերգեյ Բազապչն ու վարչապետ Մերգեյ Շամբան հայտարարեցին, որ «իսրայելական ընկերությունները մտադիր են ներգրավվելու երկրի օգտակար հանածոների հանքավայրերի մշակման գործընթացում, ինչի նպատակով առաջիկայում նախատեսվում է իսրայելցի մասնագետներից բաղկացած խմբի այց՝ ոլորտում համատեղ նախագծերի ծրագրման նպատակով»: Խոսքը գնում է ածխի, կապարա-ցինկային և մոլիբդենի հանքաքարերի, բարիտի, արծաթի, նիկելի ու պղնձի հանքավայրերի շահագործման մասին: Նկատենք, որ Արխազիա Global CST ընկերության պատվիրակության այցի նախօրեին՝ ընդամենը մեկ օր առաջ, ս.թ. ապրիլի 13-ին Մոսկվայում կայացան նախագահ Ս. Բազապչի ու Global CST ղեկավարության միջև բանակցություններ, որին կրկին իսրայելական կողմից մասնակցում էին Իսրայել Չիվն ու Մեիր Բլիֆին: Հանդիպման ընթացքում Իսրայել Չիվը ընդգծեց Արխազիային անվտանգության ոլորտի սարքավորումների ու ոչ հարձակողական բնույթի պաշտպանական տեխնոլոգիաների մատակարարումների հարցում իսրայելական ընկերության պատրաստակամությունը: Իսկ մոսկովյան հանդիպմանը նախորդել

էր Իսրայելում ս.թ. մարտին արխազ պաշտոնյաների ոչ պաշտոնական այցելությունը՝ Արխազիայի վարչապետի օգնական և խորհրդական Բեսլան Էշբայի գլխավորությամբ: Վերջինս կոորդինացնում է Իսրայելի հետ տնտեսական համագործակցության ուղղությունը:

Հետևություններ

Արխազիայի հետ իսրայելական կողմի համագործակցության հաստատումը խոսում է հարավկովկասյան զարգացումներում Իսրայելի ներգրավվածության ընդլայնման մասին: Արխազիայում իսրայելական գործոնի ի հայտ գալը վկայում է տարածաշրջանում Իսրայել պետության ռազմավարության որոշակի փոփոխության մասին: Իհարկե, ինչպես նկատում է փորձագետների մեծ մասը, մեղմ ասած՝ անիրատեսական է ենթադրել, թե Իսրայելը կարող է ճանաչել Արխազիայի անկախությունը: Սակայն այն, որ Արխազիայի հետ իսրայելական կողմի համագործակցության խորացումը առաջիկայում կհանգեցնի Արխազիայի տարածաշրջանային ու միջազգային հեղինակության բարձրացմանը, իսկապես հիմնավորված է: Մյուս կողմից, ներգրավվելով արխազական զարգացումներում՝ իսրայելական կողմը լուրջ հայտ է ներկայացնում Վրաստանի հետ ունեցած հարաբերություններն իր ծրագրած ուղով տանելու ուղղությամբ, հետևաբար և մեծապես ընդլայնելով մեր տարածաշրջանում իսրայելական գործոնի մանրեկու նախկին հնարավորությունները: Առաջիկայում Հարավային Կովկասում իսրայելական գործոնի ակտիվացման համար լուրջ ու նպաստավոր նախադրյալ է հանդիսանում իսրայելական կողմի՝ Բաքվի ու Մոսկվայի հետ համագործակցության խորացման հանգամանքը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արման Ս. Եղիազարյան

Պատմական գիտությունների թեկնածու

Հայկական գաղթախոսքի մինչև 1921թ.¹: Դեռևս վաղ միջնադարում առաջացած հայկական գաղթախոսքը հետագա դարերում համալրվում էին Հայաստանից հարկադրաբար հեռացող հայության հաշվին: VIII-XI դդ. Հայաստանից հայերի արտագաղթերի հետևանքով տարբեր երկրներում հայության տոկոսն այնքան էր աճել, որ հնարավորություններ էին ստեղծվել Հայաստանից դուրս հայկական իշխանությունների հիմնադրման համար: Այդպիսիք էին Համշենի, Մարաշի, Եդեսիայի, Քեսունի և Կիլիկիայի հայկական իշխանությունները: Վերոհիշյալ իրողությունները ցույց են տալիս, որ հայրենիքից հեռացած հայության մեջ մշտապես արթուն էր մնում սեփական իշխանություն, պետություն ունենալու գաղափարը, որը հաճախ հնարավոր էր լինում նյութականացնել՝ նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ գաղթախոսքներում ուշ միջնադարում գրեթե չէին մնացել հայ ազնվականության ներկայացուցիչներ, հայությունը չունեի քաղաքական ղեկավարություն, որը նրան կառաջնորդեր՝ նյութականացնելու սեփական պետություն ունենալու գաղափարը: Այդ ժամանակ հայությունն իրենից ներկայացնում էր սուկ հոգևոր համայնք, քանի որ պետականության բացակայության պայմաններում վերջինիս որոշ գործառույթներ իրականացվում էին Հայ առաքելական եկեղեցու կողմից: Եկեղեցին հայության համար միակ ղեկավարությունն էր և, քանի որ հոգևոր բնույթի էր, հայությունն ուներ փաստորեն միայն հոգևոր իշխանություն, այդպիսով, որպես հավաքականություն, հանդիսանալով հոգևոր համայնք:

1. Ժամանակագրական սույն սահմանագիծը մենք անցկացնում ենք այն պատճառով, որ Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարությունը Սփյուռքում հաստատվել է 1921թ.:

Հայկական քաղաքական կուսակցությունների ստեղծումը Հայոց պատմության մեջ ունեցավ դարակազմիկ նշանակություն: Դա հայոց համար քաղաքական ղեկավարության ի հայտ գալու գործընթացն էր: Հենց կուսակցությունների գործունեությունն էր, որ հայությանը, բացի հոգևոր համայնքին բնորոշ հատկանիշներից, սկսեց հաղորդել նաև քաղաքական հասարակությանը հատուկ բնորոշիչներ: Այդ ամենի հետևանքով հայության մեջ սկիզբ առավ ազգային-ազատագրական շարժում, որն ի վերջո պսակվեց Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումով, այսինքն՝ կրկին հաջողվեց նյութականացնել սեփական պետություն ունենալու հարատև գաղափարը: Գարեգին Նժդեհը նշում է, որ «շնորհիվ Քրիստափորի (իմա՝ Քրիստափոր Միքայելյան) օտար լծերի տակ ստրկորեն հոգեվարող հոգևոր հոտի փոխարեն այսօր կա անկախ և ստեղծագործ քաղաքական ժողովուրդը»²:

Հայոց ցեղասպանության հետևանքով սկսվում է հայկական Սփյուռքի վերջնական ձևավորման գործընթացը: Ինչպես ընդհանուր առմամբ Հայոց պատմությունը կարելի է բաժանել երկու խոշոր ժամանակաշրջանների՝ նախքան Ցեղասպանությունը և Ցեղասպանությունից հետո, այնպես էլ նույն բաժանումը միանգամայն կիրառական է Սփյուռքի պատմության համար:

Հայկական քաղաքական կուսակցությունները Ցեղասպանությունից առաջ և, հատկապես, դրանից հետո, բացի Հայաստանից, իրենց կազմակերպությունները ստեղծում էին նաև Սփյուռքի տարբեր գաղթօջախներում, այդպիսով որոշակի քաղաքական նրբերանգներ հաղորդելով նաև նրանց: Սփյուռքը սկսում է աջակցություն ցուցաբերել հայ ազատագրական շարժմանը, իսկ այնուհետև՝ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո, նաև Հայաստանի Առաջին Հանրապետությանը: Սփյուռքում գոր-



ծում էին նաև բազմաթիվ հայրենակցական միություններ, որոնք, կուսակցությունների համեմատ, ընդգրկումով թեև ավելի փոքր, սակայն նույն գործունեությունն էին իրականացնում:

Ինչ վերաբերում է Սփյուռքի ձևավորմանը, ապա այդ գործընթացը մինչև 1921 թ., երբ այնտեղ հաստատվեցին Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարները, դեռևս չէր ավարտվել, և միայն այդ թվականից հետո, ինչպես կտեսնենք, սկսեց ընդունել կազմակերպակառուցվածքային այն դիմագիծը, որը, ոչ էական փոփոխություններով, գոյություն ունի նաև այսօր:

Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավարության հաստատումը Սփյուռքում:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանը խորհրդայնացվեց: Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունն այդ իրադարձությունից հետո մնաց երկրում: 1921 թ., երբ նրանց մեծամասնությունը հայ բուլշևիկների կողմից ձերբակալվեց, իսկ այնուհետև հրաշքով փրկվեց Երևանի բանտում տեղի ունեցած սպանդից փետրվարյան համաժողովրդական ապրս-

2. Տե՛ս Գարեգին Նժդեհ, Երկեր, հ. 1, Եր., 2002, էջ 312:



Հ. Թումանյան, Գ. Դեմիրճյան, Լ. Շանթ, Մ. Սարյան եւ այլոք

տամբության շնորհիվ, վերջինիս պարտությունից հետո սկզբում տեղափոխվեց Սյունիքում ստեղծված Լեռնահայաստանի Հանրապետություն, իսկ այնուհետև հեռացավ հայրենիքից՝ հաստատվելով Սփյուռքում:

Հայաստանի Խորհրդային Հանրապետության ստեղծումով, այսպիսով, տեղի ունեցավ լուրջ փոփոխություն Սփյուռքում: Հայրենիքից հեռացան և այնտեղ հաստատվեցին Հայոց արդեն նախկին անկախ պետության ղեկավար այրերը: Նրանք գրեթե բոլորը ՀՅԴ անդամներ էին, իսկ ՀՅԴ-ն մինչև այդ էլ սեփական կառույցներն ուներ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում: Սակայն այժմ գաղթօջախներ եկան քաղաքական գործիչներ, պետության նախկին ղեկավարներ, անձինք, որ կանգնած էին եղել 1890-ական թթ. սկիզբ առած հայ ազատագրական շարժման ակունքներում, անցել էին այդ շարժման ողջ ընթացքը, կազմակերպել հայության տարբեր հատվածների ինքնապաշտպանությունը Յեղասպանության ժամանակ, պայքարել անկախ պետականության ստեղծման համար, հիմնադրել Հայաստանի Առաջին Հանրապետությունը, անցել իշխանության, կազմավորել պետական կառույցներ, իսկ այնուհետև՝ կորցրել իշխանությունը:

Հասկանալի է, որ նրանց հաստատվելը Սփյուռքում չէր կարող լուրջ հետևանքներ չունենալ և, մասնավորապես, այն համայնքներում, որտեղ լուրջ դերակատարություն ուներ ՀՅԴ-ն: Վերջինս, մինչ այդ հանդիսանալով Հայաստանի Առաջին Հանրապետության ղեկավար կուսակցություն, Սփյուռքում ձգտելու էր նույն դերակատարությանը: Նշենք, որ ՀՅԴ-ն Սփյուռքում այդ ժամանակ արդեն ամենատարածված և ամենահեղինակավոր քաղաքական կազմակերպությունն էր, որի արդյունքում Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը կարևոր դերակատարություն ստացավ ՀՅԴ համասփյուռքյան կառույցում՝ մասնավորապես, և Սփյուռքում՝ ընդհանրապես:

«Հոգևոր Հայաստան»-ի ստեղծումը: Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարությունը, հաստատվելով Սփյուռքում, ակտիվորեն շարունակեց իր գործունեությունը: Այս կապակցությամբ Մ. Վրացյանը գրում էր Ամենայն հայոց կաթողիկոսին. «Մենք տարագրության մեջ էլ այն ենք, ինչ որ էինք Հայաստանում: Մենք սիրում ենք մեր հայրենիքը և ոչ ոքի չենք ների նրա վերաբերմամբ գործված որևէ անիրավություն: Փառք և պատիվ չենք փնտրում, ոչ էլ բարեկեցիկ կյանք մեզ համար, բայց հայ ժողովրդի պատվին և բարեկեցությանը վնասողների դեմ պայքարում ենք և պիտի շարունակենք: Մեր գոյության նպատակը և կյանքի իմաստը Հայաստանի և հայ ժողովրդի ազատությունն է և անկաշկանդ բարգավաճումը»³:

Այդ նպատակների իրականացումը, հայրենիքից կտրված ապրելու պայմաններում, հասկանալի է, իրականացվելու էր այլ հարթության վրա և այլ մեթոդներով:

Եվ հենց այլ հարթության վրա և այլ մեթոդներով 1920-ական թթ. Սփյուռքում սկսվեց

3. Տե՛ս Մ. Վրացյան, Խոսք ընդ ուսուցչի, Տ. Տ. Գևորգ Զ սրբ. կաթողիկոսին, - ԵՊՀ աստվածաբանության ֆակուլտետի «Տարեգիրք», 2009, էջ 207:

«ՀՈԳԵՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի ստեղծման գործընթացը: «Հոգևոր Հայաստան» գաղափարական հասկացությունն օգտագործվում էր հենց Սփյուռքում հաստատված Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին պետական այրերի (Ս. Վրացյան, Գ. Նժդեհ և այլք) կողմից:

Իր էությանը այն նշանակում էր վիրտուալ (երևակայական) հայրենիք, պետություն՝ աշխարհում ցրված ազգի վիրտուալ հավաքականություն: Այդ մասին Ս. Վրացյանը գրում է. «Կազմակերպելով և բարեշինելով հանդերձ իր ներքին կյանքը, Հայ Սփյուռքը չմոռացավ ու չկտրվեց Մայր Հայրենիքից, իրեն միշտ զգաց Հայրենիքի մեկ մասը՝ մի տեսակ «Հոգևոր Հայաստան»: ՀՈԳԵՎՈՐ Հայաստանը չփորձեց իրեն հակադրելու ՍՈՎԵՏԱԿԱՆ Հայաստանին, թեև վերջինս ուրացավ և դավադրեց նրա դեմ»⁴:

Գ. Նժդեհը, անդրադառնալով ամերիկահայության իրավիճակին, գրում է. «Կա՛ հայությունը հոգեբանորեն կենտրոնացնելու, նրան իբրև հասարակություն կերպավորելու մի գործոն - ՀԱՅ ՀԵՂ. ԳԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ: ...Ամերիկահայությունը, ուրեմն, բաժանվում է երկու մասի - հայ հասարակություն դառնալու իդեալով առաջնորդվող ազգայնական հոսանք և ցեղորեն դիմագուրկ, ապագայնացած ու տարրալուծվելու հակամետ ցրվածություն»⁵:

Այսինքն, ըստ Ս. Վրացյանի և Գ. Նժդեհի, ՀՅԴ-ն աշխարհում ցրված հայությանը որպես մեկ հավաքականություն ձևավորելու փորձ էր կատարում, որը իրականացվում էր ինչպես առանձին գաղթօջախներում՝ դրանք վերածելով կազմակերպված համայնքների, այնպես էլ համասփյուռքյան սահմաններում: Ի տարբերություն միջնադարի, երբ հայությունը կարողանում էր սեփական իշխանությունները ստեղծել հայրենիքից դուրս, այժմ՝ XX դ. սկզբին, հայության վիրտուալ հավաքականությունը չէր ունենալու գծված սահմաններ:



Գրո, Վրացյան

Վերջիններս ունենալու էին համասփյուռքյան ընդգրկում:

Կար Հայաստանի Խորհրդային Հանրապետություն, որն անկախ չէր: Այն քաղաքական դրդապատճառներով աստիճանաբար կրտսում էր կապերը սեփական Սփյուռքի հետ: Միևնույն ժամանակ, կար աշխարհում սփռված հայություն, կար, ի դեմս հայկական կուսակցությունների ղեկավարությունների, նաև հայության քաղաքական ղեկավարություն: Ստիպված լինելով կտրվել մայր հայրենիքից, ապրել առանց նրա, այն օտար հողում փորձ էր կատարում ստեղծելու հոգևոր հայրենիք, մի իրականություն, երբ աշխարհասփյուռ հայությունը ղեկավարվում, ուղղորդվում է, երբ ստեղծվում են նրա ներքին կյանքի տարբեր բնագավառները կարգավորող կառույցներ ու կազմակերպություններ, երբ հայությունը սկըսում է զբաղվել իր խնդիրներով: Գ. Նժդեհը գրում է. «Կտրված մայր հողից և հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա (իմա՛ սփյուռքահայությունը - Ա. Ե.) դարձել է հոգեպես անհող և անհայրենիք: ...Հայաստանից դուրս, օտարության մեջ, միայն Յեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրե-

4. Տե՛ս նույն տեղում, էջ 205:
5. Տե՛ս Գ. Նժդեհ, նշվ. աշխ., էջ 172:

նի հողն ու ժողովուրդը: ...Այսօր, միսիթարության ու հպարտանքի երկու առարկա ունենք - Ցեղային Շարժումը և մեր մարտական ուժը: Ապրեցրե՛ք երկուսն էլ, որ ապրեք իբրև Ազգ և Հայրենիք»⁶: Ընդհանրապես, Գ. Նժդեհը կարգախոս էր մշակել. «Երբե՛ք և ոչ մի տեղ՝ առանց հոգևոր Հայրենիքի»⁷:

Դատելով ՀՅԴ գաղափարախոսների խոսքերից՝ «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման համար նախ և առաջ նրանք հիմք էին ընդունում ՀՅԴ կազմակերպական կառույցը: Առաջին հերթին շեշտը դրվում էր ՀՅԴ տարածքային, տեղական կառույցների վրա, որոնք տարբեր համայնքներում ձեռք էին բերում նաև համայնքային ղեկավարության գործառույթներ՝ երբեմն համայնքային կառույցի իմաստով վերածվելով համայնքի: Ա. Սահակյանը, նկարագրելով 1920-ական թթ. Մերձավոր Արևելքի գաղթօջախներում ՀՅԴ իրականացրած գործունեությունը, մասնավորապես ընդգծում է. «...ընկերները թափով նվիրվեցան աշխատանքի: Որքան արագ գլուխ գար մեր կոմիտեներու կազմությունը, և որքան ուժեղ ըլլային անոնք, այնքան դյուրին պիտի ըլլար ընդհանուր համակարգություն մտցնել ժողովուրդին մեջ»⁸: Ասվածից պետք է եզրակացնել, որ հայ գաղթականության ներքին կյանքի կարգավորման նպատակի իրականացման գործում ՀՅԴ գործիչները շեշտը նախ և առաջ դնում էին սեփական կառույցի ամրապնդման վրա:

«Հոգևոր Հայաստան»-ի գաղափարախոսների (Ս. Վրացյան, Գ. Նժդեհ, Ն. Աղբալյան, Լ. Շանթ և այլք) ջանքերով Սփյուռքում աստիճանաբար ի հայտ են գալիս մշակութային, կրթական, կանանց, երիտասարդական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպություններ, միություններ և հաստատություններ, իսկ արդեն իսկ գոյություն ունեցող նմանատիպ կազմակերպություններն ու միությունները ավելի են ընդարձակում իրենց գործունեությունը: Նմանատիպ կառույցների



Նիկոլ Աղբալյան

գործունեությունը ուներ մի քանի տարածական շրջանակ: Այն երբեմն ընդգրկում էր որևէ առանձին վերցրած համայնք, երբեմն ունենում տարածաշրջանային, իսկ երբեմն էլ՝ համասփյուռքյան տարածում⁹:

ՀՅԴ-ն երիտասարդ սերնդի շրջանում սկսում է տարածել նաև ազգայնական դաստիարակություն: Սփյուռքի երիտասարդության համար ստեղծվում են «Ցեղակրոն ուխտեր»¹⁰: Տարբեր համայնքներում ՀՅԴ կառույցները հայության շրջանում իրականացնում են նաև դատական գործառույթներ:

ՀՅԴ գաղափարախոսների դերակատարությամբ պայմանավորված էր «Հոգևոր Հայաստան»-ի ձևավորման գործընթացում այնպիսի մի կարևոր ձեռնարկ, ինչպիսին էր քաղաքական երանգի հաղորդումը Սփյուռքին: Այդ ճանապարհով հայությունը կրկին հոգևոր համայնքին բնորոշ հատկանիշներից

6. Տե՛ս նույն տեղում, էջ 480:

7. Տե՛ս նույն տեղում, էջ 82:

8. Տե՛ս «Պատմագրություն Հայ Հեղափոխական Դաշնակցության», քառահատոր շարք, հ. Դ, Ե., 2003, էջ 323:

9. Տե՛ս նույն տեղում, էջ 305-340:

10. Տե՛ս Ա. Բարսեղյան, Ցեղակրոն շարժումը, հրատ. «Հայրենիք» ակումբ, Ե., 2009:

բացի սկսում է ստանալ քաղաքական համայնքին հատուկ բնորոշիչներ: Դրանք Սփյուռքին հաղորդվեցին համապատասխան կառույցի ստեղծմամբ, որը սկզբում կոչվում էր «Հայաստանի Հանրապետության պատվիրակություն», որը շարունակում էր 1920-ական թթ. սկզբին գոյություն ունեցող Հայաստանի Առաջին Հանրապետության պատվիրակության գործունեությունը, իսկ այնուհետև վերանվանվեց «ՀՅԴ Հայ դատի հանձնախումբ»՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ¹¹: Հանձնախմբի գործունեությունը նպատակաուղղված էր հայկական պահանջատիրության արծարծմանը տարբեր երկրներում և կազմակերպություններում: Դրանով իսկ աշխարհասփյուռ հայությունն իրականացնում էր սեփական քաղաքականությունը, որը, ճիշտ է, ուներ սահմանափակ (գրեթե միայն պահանջատիրության) բնույթ, սակայն, միևնույն ժամանակ, համահայկական շահի ընդգրկում: Այդ պատճառով «Հայ դատ» հասկացությունը շուտով ձեռք բերեց համասփյուռքյան, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից (1991 թ.) հետո՝ նաև համահայկական տարածում:

Այսպիսով՝ ձևավորվում էր «Հոգևոր Հայաստան»-ը: Վերջինս սկզբնապես իրականություն էր դառնում ՀՅԴ համասփյուռքյան կառույցի շրջանակներում, սակայն, գործունեության համահայկական դաշտի պայմաններում, «Հոգևոր Հայաստան»-ի սահմաններն անընդհատ ընդարձակվում էին:

Այս շրջանում «Հոգևոր Հայաստան»-ն ընդգրկում էր երկու տարածական շրջանակ կամ հավաքականություն՝

1. Սփյուռքի առանձին համայնքի շրջանակ - այս «Հոգևոր Հայաստան»-ը ընդգրկում էր առանձին վերցրած մեկ հայկական համայնք, որտեղ հայությունը կարգավորում է իր ներքին կյանքը, ստեղծում կրթական, մշակութային և այլ բնույթի հաստատություններ: Սփյուռքի համայնքն իրենից ներկայացնում



ՀՀ վարչապետ Միսոն Վրացյանը և «Հայրենիք» ամսագրի խմբագիր Ռուբեն Գարբինյանը, «Հայրենիք» խմբագրասանը, 1943թ.

էր Սփյուռքի բջիջը, որին, ընդհանուր առմամբ, հատուկ էին նույն խնդիրներն ու նպատակները, ինչ մյուս համայնքներին:

2. ՀՅԴ կառույցի շրջանակ - այս «Հոգևոր Հայաստան»-ը նույնպես ուներ սահմանափակ ընդգրկում, այն զուտ կուսակցական կամ կառույցային կյանքին և գաղափարախոսությանն էր վերաբերում: Թեև ՀՅԴ-ն և նրա որոշ դուստր կազմակերպություններ ունեին համասփյուռքյան այս կամ այն մասըրշտաբի տարածում, այնուամենայնիվ համասփյուռքյան սահմաններում նրանց գործունեությունը սահմանափակվում էր սեփական անդամներով և համակիրներով: Միևնույն ժամանակ, ապակուսակցական սկզբունքով ստեղծվող դուստր կազմակերպությունների միջոցով «Հոգևոր Հայաստան»-ի սահմաններում սկսում են ընդգրկվել հայության նորանոր հատվածներ:

Պետք է նշել, որ «Հոգևոր Հայաստան»-ի ստեղծման գործընթացը պատմական անհրաժեշտություն էր և անխուսափելիորեն

11. Տե՛ս «Պատմագրություն Հայ Հեղափոխական Դաշնակցության, հ. Դ, էջ 308:

ստեղծվելու էր սեփական հայրենիքից հարկադրաբար կտրված ապրելու պայմաններում: Սակայն յուրաքանչյուր, թեկուզ անխուսափելի, գործընթաց ունենում է առաջնորդներ: Հայաստանի Առաջին Հանրապետության նախկին ղեկավարներն էին այն առաջնորդները, որոնք ներմուծեցին «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը և իրենց գործունեությամբ իրականություն դարձրեցին այն: Որպես հայ ազատագրական շարժման և հայկական պետության ղեկավարներ, նրանք վաղուց արդեն թրծվել էին համահայկական շահերի բովում: Նրանց ջանքերով և անմիջական աշխատանքով է, որ ստեղծվեց «Հոգևոր Հայաստան»-ը՝ աշխարհասփյուռ հայության վիրտուալ հայրենիքը Հայաստանի սահմաններից դուրս:

Ինչ վերաբերում է Հայ դատի լուծմանն ուղղված քաղաքականությանը, ապա ընդգծենք, որ այդ ձևով հայությունն իրականացնում էր սեփական քաղաքականությունը, որը, սկզբնապես բխելով առանձին կուսակցությունից, այնուհետև նույնպես ստացավ համասփյուռքյան ընդգրկում: Շուտով սփյուռքահայության գործունեության այդ ասպարեզում ևս սկսեցին գործունեություն ծավալել Սփյուռքի մյուս ազդեցիկ կազմակերպությունները: Սփյուռքահայության վիրտուալ հավաքականությունը՝ համասփյուռքյան «Հոգևոր Հայաստան»-ը, դարձավ իրականություն:

Ընդհանուր առմամբ՝ «Հոգևոր Հայաստան»-ը որպես վիրտուալ հավաքականություն, հայրենիք կամ պետություն բնութագրելիս պետք է արձանագրել, որ այն, իր տարբեր տարածական և մարդկային ընդգրկումներով, կազմում էր մեկ ամբողջություն: Այն ուներ սեփական ժողովուրդը, քաղաքական համակարգը (կուսակցություն և տարաբնույթ կազմակերպություններ, կառույցներ ու հաստատություններ), գաղափարախոսությունն ու շահերը, ներքին կյանքը, ինչպես նաև վարում

էր սեփական քաղաքականությունը՝ պաշտպան կանգնելով համազգային դատին:

Հետագա տասնամյակներում առաջ էին գալիս Սփյուռքին հուզող նոր խնդիրներ, սակայն ապրում էր «Հոգևոր Հայաստան»-ը, որն արդեն դարձել էր կենսունակ: Բացի այդ, նոր տասնամյակները հայությանը նոր խնդիրներ էին առաջադրում, որոնց լուծումը շատ հաճախ պահանջում էր համահայկական ջանքեր:

«Հոգևոր Հայաստան»-ը Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո: 1988 թ. սկսած «Հոգևոր Հայաստան»-ը զգալի մասնակցություն ունեցավ Արցախյան պայքարին, իսկ Հայաստանի քաղաքական անկախության վերականգնումից հետո մեծապես ինտեգրվեց «նյութական հայրենիքի»՝ Հայաստանի Հանրապետության կյանքին:

Ներկայումս, Հայաստանի Հանրապետության առկայությամբ, «Հոգևոր Հայաստան»-ի գաղափարը կարծես որոշ չափով կորցնում է իր արդիականությունը, քանի որ հայկական անկախ պետականության գոյության պայմաններում Սփյուռքի կուսակցություններն ու կազմակերպություններն անհրաժեշտաբար այն պետք է դարձնեն իրենց գործունեության կենտրոն: Սակայն, շուտով լրանում է Հայաստանի Հանրապետության 20-ամյակը, իսկ Սփյուռքի կուսակցություններից ու կառույցներից միայն ՀՅԴ-ն է, որ իր ղեկավար մարմինը տեղափոխել է հայրենիք՝ այդ կերպ սեփական գործունեությունը ծավալելով հայրենիքում և հայրենիքից: Այդ իրողությունը ցույց է տալիս, որ «Հոգևոր Հայաստան»-ը դեռևս կենդանի է:



ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ

Հ. ՕՇԱԿԱՆՆԻՆ



Համազգային հայ կրթական և մշակութային միության և Երևանի պետական համալսարանի կազմակերպությամբ ս.թ ապրիլի 28-ին ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ գիտաժողով՝ նվիրված սիյուռքահայ անվանի արձակագիր

Հակոբ Օշականին:

Գիտաժողովը նպատակ ուներ համակողմանիորեն արժևորել Հակոբ Օշականի գրական, մանկավարժական գործունեությունը, գրականագիտական արդիական չափանիշներով գնահատել նրա գրական ժառանգությունը:

Ընթերցվեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արմեն Աշոտյանի ուղերձը:

Բացման խոսքով հանդես եկան «Համազգային» հիմնադրամի նախագահ, ՀՀ ԱԺ պատգամավոր Լիլիթ Գալստյանը, ԵՊՀ բանասիրության ֆակուլտետի ղեկան Արծրուն Ավագյանը, Հայաստանի Գրողների միության նախագահ Լևոն Անանյանը:

Գիտաժողովին իրենց մասնակցությունը բերեցին շուրջ 80 գիտնականներ՝ գրականագետներ, պատմաբաններ, մանկավարժներ Հայաստանից և Սփյուռքից, այդ թվում Մարկ Նշանյանը (ԱՄՆ), Պողոս Սնապյանը (Լիբանան), Գրիգոր Պըլտյանը (Ֆրանսիա), Ռուբինա Փիրումյանը (ԱՄՆ):

«Դրօշակ»-ի ընթերցողներին ենք ներկայացնում «Համազգային» հիմնադրամի նախագահ, ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյանի բացման խոսքը: Գիտաժողովի նյութերը կտպագրվեն առանձին գրքույկով:

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ.

*Միտելի ներկաներ,
Վերջին չորս տարիների
ընթացքում Համազգային
մշակութային միությունն ու
Երևանի պետական հա-
մալսարանը համատեղ
հերթական գիրաժողովն
են կազմակերպում: Նիկոլ
Աղբալյան, Լևոն Ծանթ,
Համասարեդ... Անդրադառ-*

*նալով և արժևորելով սփյուռ-
քահայ գրականության, գրա-
կանագիտության ու գեղագի-
տության, իսկ ավելի ճիշտ՝
հայ մտքի երախտավորներին,
կարծում եմ՝ մեր համեստ
ներդրումն ենք բերում մեր եր-
կու հարվածների, առհասա-
րակ հայ իրականության
փոխընթացմանը, ամբողջակա-
նացմանն ու ինքնության վա-
վերացմանը:*

*Մեր հերթական գիրաժո-
ղովը գալիս է արժևորելու ու
գրականագիտական արդիա-
կան հայացք ուղղելու Հակոբ
Օշականի պարկառելի ու
բազմաշերտ ժառանգությանը:*

*Պիրի ազնիվ լիներք ու
բարձրաձայներք, որ Օշակա-
նի մասին անտեղյակության*

*վարագույրը բացողի հա-
վակնություն չունենք, մա-
նավանդ որ այս դաշիճում
են իրենց գրականագիտա-
կան պրպրումներով ու բա-
ցահայտումներով Օշակա-
նի հունչքը արժևորած
գրականագետներ ու մտա-
վորականներ թե Սփյուռ-
քից, թե Հայաստանից:*

*Բայց նաև պիրի փաս-
տենք, որ տասնամյակներ
շարունակ «գաղափարա-
խոսական թանձր վարա-
գույրը» թույլ չէր տալիս, որ
արևմտահայ մշակույթի մի
գորեղ հարված ներկայու-
թյուն լիներ հայրենիքում:*

*Մտքի ու գրչի մի վիթ-
խարի հերագիծ է թողել
Հակոբ Օշականը՝ գրողը,*



գեղագետը, փիլիսոփան, մանկավարժը, ուսուցիչը, գրականագետը, հայ մարդը, մտածողը:

Հավանաբար ինքն իր մասին դարելիս իր տողով պիտի ասեր՝ «Կյանքի պարտեզներեն վռնդվածը», և չէր սխալվի, որովհետև իր սրեղծագործությունն իր կենսագրությունն էր, նաև մեր ժողովրդի կենսագրությունը՝ կրքերով, ցավերով, հաղթանակով ու պարտություններով, ինքնանորոգումով ու փնտրությամբ: Երբեք այնպիսին, ինչպես մեր ժողովրդի մնացորդացիներ:

«Արևմտահայ գրականությունը իմ կյանքս է»՝ այս դավանանքով էր ապրում Օշականը ու փորձում բացահայտել մեր ինքնության, կենսափիլիսոփայության ու գոյարևումի հրաշքը: Օշականի գրականությունը հայոց գոյության և ինքնության, նրա խորհրդի գեղարվեստական արտացոլումն է ու մեկնիչը. այսպիսին է նրա մասին գրա-

կանագիտական հավաքական բանաձևումը:

Հիրավի, բազմաշերտ ու բազմախորհուրդ է նրա ժառանգությունը և այն անսպառ առիթ ու հնարավորություն է տալիս ժամանակի մեջ բացահայտելու նրա աշխարհընկալումը, մտածելու կերպն ու փիլիսոփայությունը:

Գիտաժողովին մասնակից գիրնականների անուններն ու պարկառելի վաստակը թույլ է տալիս համոզված ասելու, որ Օշականի կենսագրության և ժառանգության որոշ փակ էջեր կբացվեն՝ ավելի հորդուն դարձնելով օշականագիտության զարկերակը: Համոզված

եմ նաև, որ Օշականի ամբողջական բացահայտումը այս գիտաժողովով չի ավարտվի, այլ նոր հայացքի ու հունավորման խթան կդառնա բոլոր նրանց համար, ովքեր նպատակ ունեն անդրադառնալու և գնահատելու Հակոբ Օշականի երևելի վաստակը:



„Droschak”
ORIGINE
de la Fédération
Révolut. Arméenne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
RÉDACTION DU JOURNAL
„Droschak”
GENÈVE (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳԵՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

ԳՆՈՒՆԵԱՆ

1899-ի աշնան էր. Պետերբուրգի յետ ընկած թաղերից մեկում, բժիշկ X-ի մօտ, մի երեկոյ հաւաքուել էր մունդիրատր երիտասարդների մեծ բազմութիւն: Մայրաքաղաքի «դաշնակցական» ուսանողութիւնն էր, որ եկել էր խաբրիկներ առնելու նորեկ ընկերից, դրա հետ միասին վիճաբանութեան դնելու ցաւոտ հարցերը: «Դաշնակցութիւնը» պէ՞տք է արդեօք շարունակէ իր նախկին տակտիկը, պէ՞տք է արդեօք հանդիսանայ սոսկ իբրև թիրքահայկական կուսակցութիւն, թէ՞ պէտք է ստանձնէ և կովկասահայ պայքարի դատը...

Տաք բանակրոյի մէջ կենդանի մասնակցութիւն ունէին երեք ուսանող. Մարգար Ժամհարեան, Եղիշէ Թովչեան և Բոգդան Գնունեան: Երեքն էլ այսօր պառկած են հայկական մարտիրոսութեան անձայր գերեզմանոցում. առաջինը՝ ընկած Շուշում, թիրք-հայկական ճակատամարտի մէջ, երկրորդը՝ դաւադիր գնդակի զոհ՝ թիրքաց Հայաստանում, երրորդի մահն էլ՝ այժմ ահա ծանուցանում են Բագուի գնդաններից:

Առաջին երկուսը վճռականօրէն պնդում էին status quo-ի վրայ: Վերջինը՝ Գնունին, պահանջում էր հրաժարուել թիրքահայ կրօնից և հոգ տանել «սեփական կաշուի»

մասին, որ սկսել էր նոյնպես արիւնոտուել ցարական մտրակի հարուածների տակ: Կովկասեան յեղափոխութիւնը վաղուան կենդանի իրողութիւնն է- ասում էր Գնունիքանի որ ծագել է արդէն համառուսական ազատութեան արևը, սոցիալիզմը կազմակերպում է յեղափոխական դրօշակի տակ և հեռու չէ ցարիզմի հոգեվարքի ժամը...

Դա նոր հոսանքն էր, որ ծայր էր տալիս հայ յեղափոխական, մասնաւորապէս դաշնակցական երիտասարդութեան շարքերում:

Այդտեղ, ժողովում, մենամարտի բռնուեցին երկու շուշեցի երիտասարդները- գրեթէ տակաւին պատանիներ- Գնունեան և Ժամհարեան: Կծու, անողորմ հակահարուածներ էր ստանում Գնունին իր մտերիմ ընկերից. «Այդ բոլոր պատրանքները գեղեցիկ են,- ասում էր Ժամհարեանը,- համառուսական ազատութեան արշալոյսը, ցարիզմի հոգովարք և այլն. բայց մենք պարտաւոր ենք փոքր ինչ աւելի ռէալիստ լինել. մեր չընչին ուժերով չենք կարող միաժամանակ պատերազմ յայտարարել երկու մեծ բռնապետութեանց. ռուսական կռիւր միայն վաղուան իրողութիւն է, նա տակաւին չի կերպարանաւորուել. ցարիզմը վիթխարի ուժ է, այնինչ Թիւրքիան համեմատաբար շատ աւելի թոյլ, և մենք պարտաւոր ենք ուղղել մեր ճիգերը ամենաթոյլ դիմադրութեան գծով, ևս առաւել, որ կան այնտեղ, թիւրքահայ կռուի մէջ, դիւանագիտական երաշխիքներ, կայ մանաւանդ, յաւիտենական սարսափի ու հոգեվարքի մատնուած մի ժողովուրդ»...

Ճակատագրին հաճելի եղաւ, որ այդ արի և վառվռուն երիտասարդը նահատակուէր դարձեալ ռուսահայկական կռուի մէջ, ուղիղ վեց տարի այդ խօսքերն արտասանելուց յետոյ, ուղիղ մէկ տարի այն պտոյտից յետոյ, որ նա արել էր բժիշկ Ջ-ի հետ Աբդիւ-Համիդեան տարտարոսում: Երկու ընկերները գաղափարով անջատուած, ի վերջոյ միացան սառը հողի տակ, նոյն կովկասեան հորիզոններում, նոյն յուսահատ ու տանջալի հակացարական պայքարներում: Գնունին, այդ յիշատակելի պետերբուրգեան ժողովից ի վեր, ասում են, հետզհետէ «ռուսացաւ», աւելի ճիշտ, «կոսմոպոլիտացաւ»... եղաւ սոցիալ-դեմոկրատ, խզեց կապերը «Դաշնակցութեան» հետ, իսպառ ձուլուեց ռուսական կազմակերպութեան մէջ, հրաժարիմք ասաց այն բոլոր պարտաւորութիւններին, որոնք կապում են հայ յեղափոխականին, իբրև հայ յեղափոխականի: Գիտակցաբար, թէ անգիտակցաբար նշանաբան արեց Կարլ Մարքսի նշանաւոր խօսքը. «Ich bin Weltburger», «ես համաշխարհաքաղաքացի եմ»... մոռանալով, որ Մարքսը իր ծագումով իսկ արդէն համաշխարհաքաղաքացի էր, մի տեսակ անհայրենիք, մոռանալով նաև, որ մարքսիզմը վերջին ժամանակները դարձել է արդէն ջերմօ-

րէն հայրենասէր և ազգապաշտպան: Այնքան մոլեռանդ եղաւ նորադասան հայ սոցիալ-դեմոկրատը, որ ազգ, հայրենիք, լեզու, ազգային դատ և այլն հռչակում էր իբրև անկորդ նախապաշարումներ և յայտարարում էր, մի օր տաք վիճաբանութեան մէջ, ժընկվում, «Դրօշակի» խմբագրատանը,- որ իրեն համար միևնոյն է՝ թէկուզ ամբողջ հայութիւնը մահմեդականանայ: Այդտեղ էր հասնում հայ մարքսիստի «ազգայնական անտարբերութիւնը»:

Նոր հոսանքն էր, այո, հայ մտաւորականութեան մէջ, իր տխուր ծայրայեղութիւններով: Եւ դա ռուսական առանձնայատուկ սոցիալ-դեմոկրատիզմի ներգործութիւնն էր. արևմտեան, եւրոպական սոցիալիզմը վաղուց հրաժարուել է մարքսիզմի այդ նախկին ու հիւանդոտ ծայրայեղութիւններից: Ռուսներն իրենք այդ աստիճան «ազատագրուած» չեն ազգայնական «նախապաշարումներից». ընդհակառակը, բուն ռուսական սոցիալ-դեմոկրատները խորապէս հայրենասէր են, բայց մերժում են հպատակ տարրերի յեղափոխականներին՝ նոյն հայրենասիրական դաւանանքը... որպէսզի ըստ կարելւոյն շուտ իրագործուի մանր ազգերի ձուլումը Մայր Ռուսաստանի ծոցում, և որպէսզի ըստ կարելւոյն շուտ իրականանայ ռուս սոցիալ-դեմոկրատների փայփայած կենտրոնական-պրոլետարական պետութիւնը:

Գնունեանցը կղզիացած չէր իր տարապայման մտայնութեամբ: Նրա հետ գրեթէ միաժամանակ հրապարակ եկան բազմաթիւ ուրիշ հայ ուսանողներ և ուսանողուհիներ, որոնք տոգորուած ս.դ.-ական բրոշիւրներով, սնուած մակերեսայնօրէն «դասակարգային անտարանով», սերտած այդ անտարանի բոլոր «կախարդիչ» ֆորմուլները, արհամարհոտ անտարբերութիւն էին քարոզում դէպի «բուրժուական նախապաշարումները», - հայրենիքի գաղափար, ազգային դատ ու լեզու, ազգային անհրաժեշտութիւններ...

Անդրադարձէք մի վայրկեան երկու հոսանքների վրայ: Մի կողմից բուն դաշնակցական երիտասարդութիւնը, որ նուիրուած հարազատ ժողովրդի դատին, ապշեցնում էր հայութիւնը իր հերոսութեան ու անձնուրացութեան թափերով, այնտեղ, հեռու թիրքահայկական մարտադաշտերում,- մյուս կողմից այդ նորաբողբոջ ու հայաբարբառ սոցիալ-դեմոկրատիան, որ 900-ական թուերի սկզբում հրապարակ էր նետում անհնարին շոհնդով, արհամարհում էր «ազգասէրներին», յեղափոխական գործիչներին, պարծենում էր ամեն քայլափոխում իր ազգայնական անշահախնդրութեամբ, իր չնաշխարհիկ կոսմոպոլիտիզմով, որ գարշում էր բուն մարտական մեթոդներից, որ ձգտում էր դէպի լեզալ, կէսօրինական աշխատանքներ, դէպի խօսքի ու ֆրազի եռան-

դուն մշակութուն...

Այդպես էր գրեթե բոլոր այն երիտասարդների մտայնությունը, որ մեծ մասամբ- այս կամ այն պատճառով- դժգոհում ու հեռանում էին «Դաշնակցության» շարքերից և որոնք մինչև օրս էլ, իբրև հաւաքական-գաղափարական մարմին, քարշ են տալիս մի անգոյն ու անօգուտ գոյություն:

Բացառություններ, անշուշտ, կային այդ անհրապոյր դպրոցի մէջ- ողբալի կը լինէր, եթէ բնաւ չը լինէին- և նրանցից էր Գնունեանը: Մարքսիզմը Ռուսաստանի հողի վրայ ծնունդ է տալիս երկու տեսակ տիպերի: Ոմանք դառնում են մի մի խանդավառ երկրր-պագուներ, անհաշտ ու մոլեռանդ, ինչպես նախնի քրիստոնէաները, բայց և անկեղծ ու յարգելի՝ իրենց ջինջ գաղափարային յափշտակութեան մէջ: Եւ նրանք վազում են դէպի գործ, դէպի վտանգ, առանց յետ նայելու, մի սրտառուչ հաւատամքով սպառա-զինուած,- մի հաւատամք՝ որ թում է երիտասարդ նորընծաներին իբրև մի տեսակ տիեզերական համադարման, որ բաւական է քարոզել, որպէսզի աշխարհը տակնու-վրայ լինի մարդկային յարաբերութիւնները յեղաշրջուին, լացն ու տառապանքը վե-րանան: Գնունեանը այդ տիպերից էր: Ֆանատիկոս և դոգմապաշտ՝ մինչև աններե-լի ծայրայեղութիւն: Ֆանատիկոս և տարամերժ, մասնաւորապէս, հակադաշնակցա-կան իր պայքարի մէջ: (Չէ՞, նորահաւատների գլխաւոր մտահոգութիւնն էր՝ դուրս մղել Դաշնակցութիւնը Կովկասից)...

Ուրիշները կան- նուազ խանդավառ ու նուազ մաքուր հոգեբանութեամբ, որ հետևում են հոսանքին լոկ երամական բնագոյով, գրկում են վարդապետութեան դրօ-շը լոկ իբրև մոդայի պահանջ, անգիր են անում եռանդով բառերն ու ֆորմուլները, առանց երբէք ձգտելու որևէ դրական պարունակութիւն հաղորդելու այդ բառերին, առանց երբէք գեղեցկացնելու վերացական ֆորմուլները իրական զոհաբերութեամբ... Չուրկ յարատև կորովից ու շատ թէ քիչ լուրջ մտապաշարից՝ այդպիսիները սովորա-բար գնում են լցնելու կարիերիստների և ֆրազային հերոսների շարքերը: Դրանց թիւը լեզուն է Կովկասում:

Գնունեանն, այո, բացառութիւն էր և թերևս ամենաբախտաւոր բացառութիւնը այդ հոսանքում: Նա թերևս ամենարճնորմակ, ամենաանճնորաց, ամենագնահատելի դէմքն էր հայկական սոցիալ-դեմոկրատիայի մէջ, որ առհասարակ չի փայլում իր ան-դամների քանակով ու որակով: Կը վիրաւորէինք երիտասարդ նահատակի յիշատա-կը, եթէ ասէինք, որ նա իր ողջ կարիերի ընթացքում եղել է սոսկ բացասական առաքի-նութիւնների քարոզիչ, «լեզալիստ», անհայրենիք, սոսկ տրամաբան և ֆրազամուլ, մի

ագիտատոր, ինչպես շատերը իր համախոհներից: Ո՞վ գիտե... գուցե մօտիկ անցեալի փոթորկոտ թուականները Կովկասում, ազգայնական մոլեգին բախումները, հայ ժողովրդի լքուած անօրինակ վիճակը, նրա անդադրում յօշոտումները և դրացիների, բոլո՞ր դրացիների, չարախնդաց ու անիրաւ ոտնձգութիւնները- գուցե այդ բոլորը փոքր ինչ ազդեց երիտասարդ քարոզչի վրայ, մեղմելով նրա վերացական կոսմոպոլիտիզմը, դարձնելով նրան աւելի ռէալիստ, ներշնչելով, որ մարդկութեան սէրը առաձգական մի զգացում է, որ կարող է յաճախ կորչել իր տարտամ անհունութեան մէջ և որ հարկ է - միջազգայնութեան ու սոցիալիզմի դրօշակը բարձր պահելով հանդերձ - սիրել այդ մարդկութիւնը առանձին ուժգնութեամբ ի դէմս այն փոքրիկ, հարազատ հատուածի, որին մենք պատկանում ենք մեր բոլոր անհատական հարստութիւններով, մեր բովանդակ գոյութեամբ...

Ոչ, Գնունին միմիայն խօսքի հերոս չէր, այլ և գործի, վտանգի: Նա նետուեց Ռուսաստանում ամենավտանգաւոր ձեռնարկների մէջ, ուսկից սովորաբար չեն ճողոպրում դիրութեամբ: Մի քանի անգամ բանտարկուեց և երկար ժամանակ մաշեց բանտերի դռները: Մի քանի անգամ աջողեց փախչել, ծանր, մահացու ռիսկով: Արկածաւոր էր նրա վերջին փախուստը Սիբիրից, ուր քշուել էր Ավկսենտիէվի, Խրուստալեովի և այլ նշանաւոր ռուս յեղափոխականների հետ, 1905-ի մրրկալի անցքերից յետոյ, երբ Պետերբուրգում գումարուել էր հռչակաւոր «Խորհուրդը բանուորական պատգամաւորների»: Գնունեանը մասնակցում էր այդ պատմական խորհրդին, որ մի յայտնի ժամանակ ղեկավարում էր Ռուսաստանի ճակատագիրը, սարսափի մէջ պահելով ցարի կառավարութիւնը:

Շտուտգարտում էր, որ վերջին անգամ տեսանք նրան, 1907-ի Միջազգային Սոցիալիստական Կոնգրեսին: Սիբիրից նոր էր վերադարձել և ծարաւ էր նոր թռչքների ու արկածների: Այդ ծարաւը նորէն մղեց Գնունեանին դէպի երկիր, դէպի Կովկաս, ուր շատ չանցած՝ ձերբակալուեց: Եւ նորէն բանտ... Այնտեղ, խեղդուկ ու անյոյս բերդարգելութեան մէջ տիֆը խզեց այդ մշտագուարթ, երիտասարդ կեանքի թելը: Խե՞ղճ Գնունեան: Զգա՞ց արդեօք իր տանջալի նահատակութեան վայրկեաններին, բանտի մռայլ պարիսպներում, սարսափեցուցիչ ունայնութիւնը այն գեղեցիկ պատրանքների- «ազատութեան մօտալուտ արշալոյսի» և «ցարիզմի վերահաս հոգեվարքի»- որոնք այնպէս թևաւորում էին նրան 1899-ի Պետերբուրգեան ժողովում...

Մ. Վ.*

*) Միքայէլ Վարսանդեան (Յովհաննիսեան)

Երիտրուների 1919-1921 թթ. դասավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի

Մելինե Անուճյան

Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոնի գիտահետազոտական հիմնադրամ, Երևան, 2011, 290 էջ:

1919-1921 թթ. Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցավ մի աննախադեպ դասավարություն. սուլթան Մեհմեդ 6-րդ Վահիդեդդինի հասուկ հրամանագրով կյանքի կոչված Պոլսի ռազմական արևադարձ ասյանը ֆինեց Հայոց ցեղասպանության կազմակերպիչների ու իրականացնողների՝ երիտրուների, արագուլների, կառավարության անդամների, կուսակցական, դեմոկրատիկ ու զինվորական բարձրաստիճան այլ դասերի գործը: Այդ դասավարության նպատակը հստակ ձևակերպված է մեծ վեզիր (վարչադատ) Դամադ փառապետի հայտարարության մեջ. «Ես իմ առջև նպատակ եմ դնում, փաստերը ձեռքիս, ցույց տալ ամբողջ աշխարհին, թե ո՞ւմ վրա է ընկնում իսկական դասավարության արդյունքը այդ սարսափելի հանցագործությունների համար» (Լյուդ Ջորջ, Խաղաղության դաշմանագրերի մասին ձեռնարկները, Մոսկվա, 1957, ռուսերեն, հս. 2-րդ, էջ 200):

Անկախ դասական գործընթացի կազմակերպման դասձաններից՝ փաստ է, որ դասարանն աղագուցեց «այդ սարսափելի հանցագործությունների» իրողությունը և ի լուր առ-

ԱՐԵՎՄՏԱՐԱՅՈՑ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Գ Ի Տ Ա Հ Ե Տ Ա Ջ Ո Տ Ա Կ Ա Ն Կ Ի Մ Ն Ա Դ Ր Ա Մ

Մատենաշար 2

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

ԵՐԻՏՐՈՒՐՔԵՐԻ


1919-1921 ԹԹ.

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

ԸՍՏ ՕՍՄԱՆՅԱՆ ՄԱՄՈՒԼԻ

Երևան 2011



խարհի հրադարակեց դրանց հեղինակների անունները, որոնց մի մասին դասադարեց մահվան (ոմանց՝ հեռակա կարգով), մյուսներին՝ երկարակյան քանակության ու սաժանակիր աշխատանքների:

Եվ որքան էլ Թուրքիան Եւրոպայի ուրանալ Հայոց ցեղասպանության փաստը, անհերքելի իրողություն է, որ ցեղասպանությունն առաջինը դասադարեց երկիրը Օսմանյան կայսրությունն է, իրավահաջորդը՝ Թուրքիայի Հանրապետությունը:

Մ. Անույանի ներկայացվող աշխատությունը վերաբերում է 1919-1921 թթ. տեղի ունեցած այս դասավարությանը, որի ընթացքում ֆնկվեց 63 դասական գործ, որոնք բոլորն էլ հարուցվել էին հայերի տեղահանության և կոտորածների մեղադրանքով:

Երիտթուրքերի դասավարությունների արձանագրությունների մի մասն առաջին անգամ հայերենով է տպագրվել 1989 թ. օսմանագետ Ավետիս Փափազյանի՝ «Հայոց ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դասավարության փաստաթղթերի» արժեքավոր գրքում: Թեև հայերի տեղահանության և կոտորածների դասավարությունների մասին վավերագրեր են հրատարակել նաև այլ հայ և օտարազգի հեղինակներ, այնուամենայնիվ սույն դասավարությունների վերաբերյալ դեռ գոյություն ունեն չհրատարակված մեծաթիվ փաստաթղթեր: Մասնավորապես մինչ օրս ոչ մի լեզվով չէին տպագրվել Տրամիզոնի, Բյույուֆ Դերեի և Խարբերդի դասական

նիստերի (հրադարակվել էին միայն դասավճիռները) վավերագրերը: Հենց այս բացը լրացնելուն է ուղղված Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն գիտահետազոտական հիմնադրամի ավագ գիտաբանաբան, թուրքագետ Մ. Անունյանի «Երիթթուրքերի 1919-1921 թթ. դասավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի» աշխատությունը (դասավարությունների վավերագրերին վերաբերող Մ. Անունյանի հրադարակումները տղազրվել են նաև «Դրօշակի» 2009թ. հունվարի, փետրվարի, ապրիլի, հուլիսի և 2010թ. ապրիլի համարներում):

Գիրքը բաղկացած է վերլուծական մասից և օսմաներեն բնագրից հայերեն թարգմանված փաստաթղթերից: Վերլուծական բաժնում, հիմնվելով բացառապես օսմաներեն և թուրքերեն աղբյուրների վրա, հեղինակը մանրամասն ներկայացնում է 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուդրոսի զինադադարից հետո Օսմանյան կայսրությունում ստեղծված ներքաղաքական մթնոլորտը, հայերի կոտորածների խնդրի արձարծումը ժամանակի օսմանյան մամուլում, հասարակության մեջ և օսմանյան երկդալաս խորհրդարանում, Հայոց ցեղասպանության համար դասասխանասու երիթթուրքերի դեմ դասական հետադուրում սկսելու ֆաղաֆական նախադրյալները, 3 սարքեր հետախննչ հանձնաժողովների կողմից իրականացված հետախննչությունները, երիթթուրքերի կուսակցության, կառավարության, դասասխանասու ֆարտուղարների և առանձին քաջանների կառավարիչների դասախննչությունները:

Փաստագրական այս բաժնում առաջին անգամ գիտական քաջանառության մեջ են դրվում սվյալ ժամանակաքաջանի սուլքանական դալասի բանքեր «Ալեմդար» օրաքերթում հրասարակված Յոզղաշի, Տրադիզոնի, Բյույոֆ Դերեի (Բողազիչի) և Մամուրեթ-ուլ Ազիզի (Խարքերդ) հայերի սեղահանության և կոտորածների դասասխանասուների դասախննչության նիստերի արձանագրությունները: Առաջին անգամ է գիտական քաջանառության մեջ դրվում նաև Տրադիզոնի դասավարության մեղադրական եզրակացությունը, որը հրասարակվել է «Ալեմդարի» 1919 թ. ապրիլի 16-ի համարում: Հեղինակը Յոզղաշի և Տրադիզոնի դասախննչությունները կարևորում է նաև նրանով, որ դրանց ընթացքում առանձին քաջանների դասական գործերի մեջ ամենաքաս վկայություններն ու աղացույցներն են քերվել՝ երիթթուրքական կառավարությունից հրահանգներ սսացած սեղական իքխանությունների կողմից հայերի սեղահանման և ոչնչացման համակարգման ու վերահսկման վերաքերյալ:


Այս դասախննչություններին 2005 թ. անդրադարձել է նաև թուրքական դաքսոնական դասմագրությունը՝ ի դեմս Թուրքական դասմագիտական ընկերության անդամ Ֆերուդուն Աքայի, որն իր «Տեղահանության դասավարությունները գրավյալ Սսամբուլում» վերնագրով գրում դնում է, թե իքր դասական նիստերում մեղադրյալների դեմ ուղղված ցուցմունքներով հանդես են եկել միայն ազգությամք հայ վկաները: Մ. Անունյանը մեմագրության մեջ բազմաքիվ օրինակներով հակադարձում է թուրք դաքսոնական դասմագրության ներկայացուցչի այս դնդմանը՝ օսմանյան օրաքերթերում հրադարակված դասական նիստերից քերելով թուրք և այլազգի վկաների՝ հայերի կոտորածները հասսասող վկայությունների բազմաքիվ օրինակներ:

Հեղինակը փաստական հարուս նյութի հիման վրա ցույց է սալիս, որ հայերի սեղահանությունների ու կոտորածների կազմակերդված բնույթը օսմանյան դասարանի կողմից արդեն իսկ աղացուցված և իրավական գնահատական սսացած անհերքելի փաստ է, որի ֆաղաֆական քահարկումները թուրքական դաքսոնական ու գիտական քաջանակների կողմից հիմնագուրկ են ու սնանկ:

Այսօր, երք նոր թափ է սսացել Հայոց ցեղասպանության բուն էությունը նենգափոխելու, դասասխանասվությունից ու հասուցումից խուսափելու թուրքական ֆաղաֆականությունը, դրա սնանկությունը փաստող դասական վկայությունների, արխիվային ու այլ վավերագրերի հրադարակումը առավել մեծ կարևորությամք է օժսվում:

Այս առումով Մ. Անունյանի աշխատությունը կարևոր ներդրում է ոչ միայն հարցը դասմագրական, այլև, որ առավել արդիական է և հրասաղ, ֆաղաֆական ու իրավական դաքսում գնահատելու սեսակեթից:

Հայկագուն Ալվրցյան




Վլադիմիր Աբրոյան

«Նա իսկական Գոլֆուսիմ է, որի սափ հոսանքը ողողում է մեր հոգիները եւ լավ սրամաղություն է արթնացնում: Կարելի է միայն զարմանալ ծաղրանկարչի հարուստ երեւակայությամբ, նրա՝ հրաշալի երգիծական վարիացիաներ ստեղծելու ունակությամբ»: Այսպես է բնութագրել Վլադիմիր Աբրոյանին մեծ ռուս ծաղրանկարիչ Բորիս Եֆիմովը: Իսկ ժամանակին Հայաստանի ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանը նրան անվանել է «ծիծաղի իսկական Կլոնոբայկ»: Այսօր Հայաստանում, քերես, չկա մի մարդ, ում ծանոթ չեն Վ. Աբրոյանի անունը կամ նրա ստեղծագործությունները: Թվում է, նա մեծադեմ մեզ հետ է եղել՝ մանկական սարիներից մինչ օրս: Եվ դժվար է դասկերացնել տեղական մամուլը առանց ծաղրանկարչին բնորոշ «Նկարը՝ Վլադիմիր Աբրոյանի» ստորագրության: Վ. Աբրոյանը ծնվել է 1939 թվականի սեպտեմբերի 23-ին, Թիֆլիսում: Կյանքի մեծ մասը (1958 թվականից) նվիրելով ծաղրանկարչությանը, նա մինչ օրս տղագրվում է Հայաստանի ամսագրերի եւ քերթերի էջերում:




**Հայաստանի վաստակավոր նկարիչ
Հայաստանի Նկարիչների
Միության անդամ**

Վ. Աբրոյանը տղագրվել է նաեւ նախկին ԽՍՀՄ հանրադատությունների տղագիր մամուլում՝ «Крокодил», «Неделя», «Огонек», «Смена», «Советский союз», «Moscow News», «Известия», «Литературная газета», «Советский спорт», «Футбол», «Ноес Лебен», «Труд» եւ այլն: Նկարչի ստեղծագործությունները չեն վրիպել նաեւ մերձբարձրյան հանրադատությունների, ԱՄՆ-ի, Գերմանիայի, Ռուսիայի, Բուլղարիայի, Հոլանդիայի, Իսպանիայի, Ֆրանսիայի, Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Իրանի, Վրաստանի, Թուրքիայի («Ակոս») քերթերի եւ ամսագրերի ուշադրությունից: «Աերջին սարիներին, - ասում է նկարիչը, - չնայած սերս համագործակցությանը տեղական մամուլին, ես աշխատում եմ մեծադեմ մասնակցել միջազգային մրցույթներին: Նախ, դա հնարավորություն է սալիս նկարչին անընդհատ «աճել», բարձրացնել նկարների մակարդակը եւ կատարելագործել անձնական ներուժը: Երկրորդը եւ ամենակարեւորն այն է, որ մեր երկիրը ներկայացնում եմ արդի եւ դասական զված արվեստի այնպիսի բնագավառում, ինչպիսին է ծաղրանկարչությունը, քանզի մասնակցությունը միջազգային մրցույթներին չափազանց կարեւոր է մեր երկրի հեղինակության համար: Այնպես որ, մեր երիտասարդ ծաղրանկարիչներին խորհուրդ կտայի անդաման մասնակցել միջազգային ցուցահանդեսներին եւ մրցույթներին»:



ԴՐՕՇԱԿ

Պ ա ս Կ Ե Ր ա Ր ա Կ





ԴՐՈՇԱԿ

